



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 79 FEBRURY / ԹԻՒ 79 ՓԵՏՐՈՒՎԱՐ 2024

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



Շբ., 3 Փետրուար – Հովանաւորութեամբ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Նաճարեան Արքեպիսկոպոս Առաջնորդ Սրբազան հօր, Զենիթ թատերասրահին մէջ, Համազգայինի «Նուպար Խաչատուրեան» թատերախումբը ներկայացուց «Հայերը ի՛նչ կ'ըսեն» թատերգութիւնը իրերայաջորդ երկու ելոյթներով, կէսօրէ ետք ժամը 4:30-ին եւ երեկոյեան՝ 7:30-ին: Հեղինակ եւ բեմադրիչ՝ Կարօ Խաչիկեան:



17 հայ երիտասարդ-երիտասարդուհիներ, օրուան դերակատարները, ինչպէս նաեւ 10 կամաւոր արուեստասէրներ ի մի եկած էին եւ մայրենի լեզուի քաղցրահնչիւն բառերով կը կատարէին իրենց ստանձնած դերերն ու պաշտօնները: Ծիծաղով, ժպիտով լեցուած էր մթնոլորտը:

«Հայերը ի՛նչ կ'ըսեն» թատերական այս կտորը, հանդիսատեսը հրաւիրեց ներհայեցողութիւն կատարելու եւ վերատեսութեան երթարկելու կարգ մը հանգամանքներ: Որքան որ ժպիտ ու ծիծաղ պատճառեց թատերգութիւնը, նոյնքան ալ մտածելու առիթ ընծայեց հանդիսատեսին, տրուած ըլլալով որ ան որպէս Հայ կը դիմագրաւէր նոյնանման մարտահրաւերներ:



Հանդիսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Տիկին Ազնիւ Ինկիլիզեան, նշելով անցնող տարուան աշխարհի չորս ծագերուն համայն հայութեան կրած զրկանքն ու ձեռնարկներէ հեռու մնալը: Այսօր հայութիւնը կը փորձէ ինքզինք վերագտնել եւ ապագան կազմակերպել, կեանքը իր բնականոն հունին մէջ դնել որպէսզի կարենայ դիմագրաւել բազմապիսի մարտահրաւերներ իր առաջին ցցուած:

Պահպանիչով փակուեցան երկու ներկայացումները:





Կիր., 4 Փետրուար – Յընթացս պատարագի, Սուրբ Յարութին Եկեղեցոյ մէջ, առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Կիրակնօրեայ Վարժարանի շրջանաւարտ աշակերտներու վկայականաց բաշխում ձեռամբ Սրբազան հօր: Այսպէս, վկայական ստացան շրջանաւարտներ՝ Աննա Զերքէզեան, Արէն Գեորգ Գրիգոր եւ Սիրաք Քասիս:

Վկայականին հետ նուիրուեցաւ երկլեզու Նոր Կտակարան, արեւմտահայերէն թարգմանութեամբ:



Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան նախ յանուն եկեղեցական դասին, Թեմական եւ Ծխական Խորհուրդներուն եւ եկեղեցական մարմիններուն, շնորհաւորեց Սրբազան Հայրը իր քահանայական ձեռնադրութեան 49-ամեակին առիթով, անոր մաղթելով առողջ եւ արեւշատ օրեր: Ապա ան ներկայացուց Սրբազան հօր նորաւարտ երեք աշակերտները, ստանալու համար Սրբազանութեան օրհնութիւնը:

Սրբազան հայրը շնորհաւորեց աշակերտները, Կիրակնօրեայի ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ տնօրէնուհի Երեցկին Յասմիկ Համբարձումեանի, Ծխական

խորհուրդը եւ մանաւանդ ծնողները, որոնք Կիրակնօրեայի աշակերտները ամէն Կիրակի կը յանձնեն եկեղեցոյ ստանալու համար Սուրբ գրքի իմաստութիւնն ու բարոյական գիտելիքները, եւ օրինակ կը հանդիսանան այլ ծնողներու: «Յատուկ ճիգ կը թափուի այս մանուկները մեր եկեղեցոյ աւանդութիւններով դաստիարակելու համար: Այսպիսով կը լրանան եկեղեցոյ շարքերը: Այս աշակերտներէն է որ պիտի գոյանան ապագայի դպրաց եւ սարկաւազաց դասերը, ապագայ Ծխական եւ Թեմական խորհուրդները» եզրակացուց Սրբազան հայրը եւ Պահպանիչով օրհնեց իր շուրջ հաւաքուած Կիրակնօրեայի բոլոր աշակերտները:

Գշ., 6 Փետրուար – Սրբազան հայրը նախագահեց Կալուածոց Յանձնախումբի վարչութեան ժողովին:



Եշ., 8 Փետրուար – Վերջին տասնամեակին ամէն Վարդանաքի Պատարագին, որ կը մատուցուի Սրբազան հօր կողմէ Սուրբ Յարութին Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ, Սիստինի երկու հայկական ամէնօրեայ վարժարաններու՝ ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի եւ Համազգային Գօլստըն Ճեմարանի աշակերտութիւնը կը մասնակցի եւ կը հաղորդուի, որմէ ետք աշակերտներն



ու իրենց ընկերակցող ուսուցիչները ճաշի հիւրերը կ'ըլլան եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբին: Այս տարի եւս նոյնը կրկնուեցաւ եւ 250 աշակերտներ եւ ուսուցիչներ երկիւղածութեամբ ստացան հաղորդութիւն Սրբազան հօր եւ Արժանապատիւ քահանայ հայրերուն ձեռքերէն: Պատարագը սկսաւ առաւօտեան ժամը 10.30-ին, Սրբազան հօր սպասարկեց Արժ Տէր Աւետիս քահանայ Համբարձումեան: Ներկայ էին նաեւ Աւագ Քահանայ հայրեր՝ Արժ Տէր Նորայր Բաթանեան եւ Տէր Պարթեւ Գարագաշեան: Բարեշնորհ Վարդան Սարկաւազ կատարեց դպրաց դասի բաժինը, բուրվառակիրն էր Բարեշնորհ Վարդան կիսասարկաւազ Սվազլեան: Օրը հինգշաբթի ըլլալով կարելի չէր լման դպրաց դաս եւ սարկաւազաց դաս ակնկալել նման Կիրակի օրերու:



Սովորություն դարձած է որ ճաշու թուղթը կարդան երկու տնօրէնները: Ալեքսանտր Վարժարանի տնօրէն Պրն Մանուկ Տէմիրճեան կարդաց Հայերէնով իսկ Գօլստրնի տնօրէն Պրն Էտի Տէմիրճեան՝ անգլերէնով: Խոստովանանքը ծնկաչոք կարդաց Պրն Մանուկ Տէմիրճեան: Յընթացս Պատարագի տեղի ունեցաւ նաեւ Հայրապետական Մաղթանք:

Պատարագի աւարտին Սրբազան Հայրը օրհնեց բոլոր Վարդան եւ Արտակ անուն կրողները: Ան տեղեկացուց որ այս օրը ընդունուած է նաեւ անուանակաչութեան սօն բոլոր անոնց, որոնք Սուրբերու անուններ չեն կրեր, ի յիշատակ անոնց, որոնք Վարդանանց ճա-



կատամարտին ինկան պատերազմի դաշտին վրայ: Գեղեցիկ աւանդութիւն մը պահուած դարեր շարունակ:

Սրբազան հայրը իր ոգեշունչ քարոզին բնաբանը ընտրած էր «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»: Ան նախ բացատրեց թէ ինչու երկու բանակներ իսկոյն իրար դէմ ելած էին ու պատերազմ հռչակած երբ մանաւանդ Պարսից եւ Հայոց միջեւ յարաբերութիւնները լաւ հիմերու վրայ դրուած էին: Ինչ էր պատահած: Պատմական իրողութիւն է որ այնքան աստէն որ Պարթեւները կը տիրապետէին Պարսկական գահին եւ Արշակունիները՝ Հայոց գահին, յարաբերութիւնները սիրալիբ էին: Սակայն երբ Մասանեանները տապալեցին Պարթեւները եւ իրենց ձեռքն անցաւ Պարսից պետական վարչամեքենան, անոնք ամէն ինչ ըրին որ Արշակունիները հեռանան Հայաստանի գահէն: Ի վերջոյ, 428 թուականին Արշակունիները գահը զիջեցան: Պարսիկները կը պահանջէին որ Հայաստանը դառնար Զրադաշտական, մանաւանդ որ իրենց երկրին երկու հարեւան Քրիստոնէայ պետութիւններ՝ Բիւզանդիոնն ու Հայաստանը կը համարէին սպառնալիք եւ ազգային անվտանգութեան խոչնդոտ: Հակառակ այս իրողութեան՝ Բիւզանդիոնը ոչ մէկ օգնութիւն ցուցաբերեց Քրիստոնէայ Հայաստանին: Ուրեմն իրերու դրութիւնը կը թելադրէր կա՛մ կրօնափոխութիւն, հետեւաբար՝ ձուլում եւ կամ՝ պայքար: Հայ ղեկավարութիւնը ՊԱՅՔԱՐԻՆ տարբերակը ընտրեց:

Պայքարի միւս միջոցը գտնուած էր 405-406 թուականներուն շնորհիւ Մեսրոպ Մաշտոց-Սահակ Պարթեւ եւ Վռամշապուհ Արքայ երրեակին: Հայ գիրը հնարաւորութիւն կու տար որ Հայը իր լեզուով ստեղծէր եւ չճուլուիլ: Այդ գիրերը դարձան զինուորներ եւ տիրութիւն ըրին Հայ ազգին եւ կ'ընեն մինչեւ օրս:

«Վարդանանցը մեր ազատութեան համար մեռնելու գիտակցութիւնը ստեղծած է մեր մէջ: Նոյն հաւատքը եւ գիտակցութիւնը կը տեսնենք Սարտարապատի ճակատամարտին: Միացեալ ուժը յաղթանակի կ'առաջնորդէ: Երբ թուլամորթ ենք, կռուելու քաջութիւն չունինք, եւ հո՛ղ կը զիջինք չգոհուելու համար՝ կը նշանակէ թէ մեր թշնամին մենք ենք: Մեր նախնիները մահը գրկեցին հո՛ղ չտալու համար: Անոնք պայքարելու օրինակը առին Սուրբ Գիրքէն» բացատրեց Սրբազանը:



Վարդանանք, ինչպես մեր վերջին տարիներուն մեր հերոս նահատակները, մէկ օր առաջ հաղորդուեցան որովհետեւ գիտնալով դէպի մահ կ'երթային իրենց ուրբերուն տակի հողը եւ իրենց ինքնութիւնը պահպանելու համար: «Այս գիտակցութեան մէջ է Վարդանաց խորհուրդը. մենք Սփիւռքի մէջ զայն կը սօսենք, եւ այդ ոգին կը փոխանցենք սերունդէ սերունդ, որովհետեւ մենք կը հաւատանք որ գիտակից մահն է միայն որ անմահութեան կը տանի: Ասոր համար մեր գոյատեւման պայքարը շարունակողներու, լեզուն ամուր պահպանողներու, քաջ երիտասարդներու պէտք ունինք: Այսօր մեր ժողովուրդը ինքզինք վերագտնելու գիտակցութիւնը պէտք է ունենայ: Ինչո՞ւ բանակի ծառայութենէն կը փախչինք: Անձնընծայման վայրն է բանակը: Ընկրկումն ու տկարութիւնը հայուն չեն վայելեր: Մենք կը հաւատանք անմահութեան, ունինք հաւատք մահուան դէմ յաղթանակին: Եկեղեցին այս հաւատքով կը դաստիարակէ սերունդները: Ասոր կողքին եւ զուգահեռ պէտք է ըլլայ մայրական դաստիարակութիւնը» եզրափակեց Սրբազան հայրը:

Պատարագի աւարտին, աշակերտները Աւետարանը համբուրելով ուղղուեցան դէպի ճաշարան, ուր հիւրասիրուեցան եկեղեցւոյ



տիկնանց յանձնախումբի անդամներուն կողմէ եւ վերադարձան եկեղեցի որ ի գործ դնեն գեղարուեստական կոկիկ եւ համադրուած յայտագիր մը:

Ալեքսանտր Վարժարանի Պետ Աշակերտուհի Լարա Գալստեան կատարեց բացման խօսքը, զոր ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ.

Ինձի համար մեծ պատիւ է այսօր, որպէս ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի Պետ աշակերտուհի, յանուն մեր Վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին և աշակերտութեան՝ Վարդանանց սօսին առիթով, իմ երախտագիտական խօսքս կատարելու Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ յարկին տակ:



Ազգային, եկեղեցական այս մեծ սօնը մեր ինքնութեան՝ Քրիստոսի հանդէպ հաւատարմութեան և դէպի յաիտենականութիւն քալող՝ Հայ ժողովուրդի սօնն է: Ամէն տարի, Փետրուար ամսուն, մեծ շուքով կը սօնախմբուի Վարդանանցը աշխարհի բոլոր Հայ վարժարաններուն և եկեղեցիներուն մէջ:

451 թուականին, Վարդան Մամիկոնեան և իր զինուորները խիզախութեամբ ու անձնագոհութեամբ, Հայրենիքի սիրոյ և հաւատքի մեծագոյն օրինակը տուին հաւատաւոր մեր ժողովուրդին:

Հայոց Պատմութիւնը գրուեցաւ մեր մարտիկներու ու նահատակներու արիւնով, սակայն անոնց քաջագործութիւններով է որ յարատեւած է մեր ազգը, յաղթահարած է տարբեր փորձութիւններ և վերջապէս շէնցուցած է մեր Հայրենիքն ու Եկեղեցին:

Այս գիտակցութեամբ, մեր Վարժարանի գեղեցիկ սովորութիւններէն մէկը եղած է, ամէն տարի դպրոցական վերամուտին, այս հեռաւոր ամիսներուն վրայ, որպէս Քաջ Վարդանի թոռներ և հպարտ հայորդիներ, այցելել Սուրբ Յարութիւն Եկեղեցի, ոգեկոչելու Աւարայրի մէջ տեղի ունեցած հերոսամարտը, ներկայ գտնուիլ Սուրբ Պատարագին ու ճաշակել Սուրբ Հաղորդութիւնը և ստանալ ձեր օրհնութիւնը Սրբազան հայր, որպէսզի մեր դպրոցական տարին սկսինք ու շարունակենք յաջողութիւններով:



Մեր վարժարանի տնօրենության, ուսուցչական կազմին եւ աշակերտության կողմէ շնորհակալություն կը յայտնեմ ձեզի, Սրբազան հայր, այս նուիրական օրուան մեր մասնակցությունը բերելու հրաւերին համար:

Հակառակ այն իրողութեան որ դպրոցական վերամուտը ձեռնարկէն մէկ շաբաթ առաջ էր, սակայն շնորհիւ երկու վարժարաններու հայերէնի ուսուցչուհիներուն, ի մասնաւորի Տիկնայք Սեդա Քեօշքերեանի եւ Արփի Դաւիթեանի, նաեւ աշակերտներու ճիգին, կարելի եղած էր հետեւեալ յայտագիրը իրականացնել. հերթականօրէն կը ներկայացնենք զանոնք.



ԽՄԲԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ - «Քաջ Վարդան Մամիկոնեան» Ե. Կարգ (ԳՃ), «Հայրն ու Որդին» Գ. Կարգ (ԱՎ), «Հայոց Քաջ Բանակին» Դ. Կարգ (ԱՎ), «Փոքրիկ Զինուորը» Ա. Կարգ (ԱՎ), «Վարդանանց Պատերազմը» Է. Կարգ (ԳՃ), «Քաջն Վարդան Մամիկոնեան» Բ. Կարգ (ԱՎ), «Պատգամ Վարդանանց» Ե.Չ. Կարգ (ԱՎ)

ԱՍՍՈՒՆՔ - «Վարդանանք» Ալիք Յովակիմեան Ը. Կարգ (ԳՃ), «Տիգրանն Աւարայրում» Ալիսիա Յովհաննիսեան և Մելանի Պետրոսեան, Զ. Կարգ (ԳՃ), «Հատուած Քաջն Վարդանի ճառէն», Յարութ Գասսիս, Ե. Կարգ (ԱՎ), «Խօսք Իմ Որդուն», Հայկ Վարդանեան և Ռոզմերի Եագուպեան, Է. Կարգ (ԳՃ),

ՄԵՆԵՐԳ - «Վարդանի Մահը» Սերա Պերթիկեան, Ժ. Կարգ (ԳՃ), «Տուն Իմ Հայրենի» Անիթա Սողոմոնեան, ԺԲ Կարգ (ԳՃ)

ԽՄԲԵՐԳ - «Միշտ Քայլէք Յառաջ» Մանկապարտէզ և Ա. Կարգ (ԱՎ), «Հիմի Էլ Լոնք Եղբարք» եւ «Պատգամ Որդուս», ԱՎ-ի Աշակերտություն

ԵՐԿՈՒ ՎԱՐՇԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆՑ ՄԻԱՅԵԱԼ ԽՄԲԵՐԳ - «Մենք Քաջ Տոհմի Զաւակներ ենք»



Փակման խօսքով հանդէս եկաւ Գօլստըն Ճեմարանի ԺԲ Կարգի աշակերտուհի Ռօզի Մարտիրոսեան, զոր ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ.

Որպէս հայ աշակերտներ եւ հայ ժողովրդի ապագան որոշող հայ պատանիներ, ուզում ենք երախտագիտություն յայտնել Հայ Առաքելական Սուրբ Յարութին Եկեղեցու ծխական խորհրդին, տարեկան սովորություն դարձրած Վարդանանքի տօնակատարութեան այս յատուկ նախաձեռնութեան համար:

Այսօր, դարձեալ մասնակցելով Վարդանանց Սուրբ Պատարագին, մենք հաղորդուեցինք նոր ուխտով՝ վառ պահելու Աւարայրի հերոսների, յանուն հայրենիքի ոչինչ չինսպող տիտանների անմահ յիշատակը: Մա նշանակում է, ոչ միայն յիշել շնորհալու համար, այլ յիշել գիտակցելու մեր պարտաւորություններին, հայ ազգի դիմակալած այսօրուայ մարտահրաւերների կապակցութեամբ մեր որդեգրելիք մտածելակերպին, նպատակամղումութեան ու առնելիք քայլերին:

Մինչ հայութեան կեանքի մէջ պատահած վերջին տարիների աղէտալի դէպքերն ու կորուստները մեզ հոգեպէս ընկճեցին, որեւէ ժամանակից աւել հարկաւոր է չկորցնել մեր բարոյական կորույր չթուլանալ... չվհաստել չյանձնուել: Հայր չի սահմանում իր կորուստներով: Ինչ էլ որ անեն չար ուժերը, ինչքան էլ անարդար լինի մեզ ճակատագրուածը, ոչինչ կարող է փոխել մեր էությունը, մեր ազգի արժէքի գիտակցությունն ու ազգային հպարտությունը, Քրիստոնէական հաւատքն ու յուսալից հայեացքները:

Հայ ազգի անցեալը լի է եղել եւ յաղթանակներով եւ պարտություններով: Մակայն ամէն մի պարտությունից դուրս ենք եկել բարոյական յաղթանակով: Դրանք այն բոլոր արժէքներն են, որոնցից չենք հրաժարուել, այլ պահպանել ենք հարիւրամեակներ ու հազարամեակներ:

Այսօր, սփիւռքեան մեր գաղթօճախներում, հարկաւոր է մեր ամէնօրեայ կեանքին վերաբերուել որպէս Տղմուտ գետի ափ ու Աւարայրի դաշտ, որտեղ պայքարի զէնքը մեր կամքն է, իսկ մեզանից իւրաքանչիւրը՝ Մամիկոնեանի առաքեալ է: Այսինքն լինել զգօն՝ շարունակելու մեր գոյամարտը... վճռակամ պահպանելու մեր ինքնութիւնը եւ հետամուտ պահպանելու մեր լեզուն, քրիստոնէական հաւատքն ու մշակութային արժէքները:

Աւանդութիւն է որ այս միջոցառման ընթացքին Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդը պարգևատրել երեք աշակերտներ երկու վարժարաններէն, որոնք տարուան ընթացքին եղած են օրինակելի իրենց նկարագրով, ծառայասիրութեամբ, ընկերասիրութեամբ, կարեկցութեամբ եւ համայնքային գործուն ծառայութեամբ: Այս տարի Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի ձեռամբ պարգևատրուեցան.

Բալիկ Կէօզուգարայեան – ԳՃ

Թալին Զիլիֆեան – ԳՃ

Սերկէյ Մահմուր – ԱՎ

Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորել երեք պարգևատրեալները:




Իր փակման խօսքին մէջ, Սրբազան հայրը շնորհաւորեց երկու վարժարաններուն բոլոր աշակերտները, որոնք իրենց ներկայացուցած յայտագրով «խրախուսեցին մեզ եւ յոյսով լեցուցին մեր ներկան ու ապագան»: Խորհրդածելով յիշողութեան վրայ, եւ անդրադառնալով ազգային յիշողութեան, Սրբազան հայրը ըսաւ. «մարդու յիշողութիւնը եթէ պահ մը խանգարուի՝ մարդը կը վերածուի խոտի: Ազգն ալ նոյնն է, առանց ազգային յիշողութեան, ազգեր պատմութեան մէջ չեն գիտնար թէ ովքեր են: Հետեւաբար մեր ազգային տօները յիշատակելը հրամայական է»:

Կը մատթեմ ձեզի որ աւելի հզօրացած, վերանորոգուած վերադառնաք ձեր վարժարանները» եզրակացուց Սրբա-

զանը եւ Պահպանիչով փակեց հանդիսութիւնը:

Շբ., 10 Փետրուար – Ընդառաջելով Սփիւռքի գործերու յանձնակատար Պրն Զարեհ Սինանեանի առաջարկին, Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ հանդիպում եկեղեցական մարմիններու ներկայացուցիչներուն հետ: Պրն Սինանեանին կ'ընկերակցէր ԱՄՆ Գրասենեակի պատասխանատու Օրիորդ Անայիս Ասթարճեան: Նախագահութեամբ Սրբազան հօր, հանդիպման ներկայ էին Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ, Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ, ներկայացուցիչներ Թեմական եւ Ծխական Խորհուրդներու, Կալուածոց Յանձնախումբի, Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնին, զոյգ եկեղեցիներու Տիկնանց Յանձնախումբերուն ինչպէս նաեւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին: Պրն Սինանեան բացատրութիւն տուաւ իր գրասենեակի գործունէութեան մասին: Ան նաեւ պատասխանեց իրեն ուղղուած հարցերուն:



Նոյն երեկոյ, Սրբազան հայրը մասնակցեցաւ ի պատիւ երգիչ Սեւակ Ամրոյեանի տրուած պաշտօնական ընթրիքին եւ կատարեց իր բարեմաղթանքները հայրենի արուեստագետին, որ Միտնի ժամանած էր իր հոգեհարազատ երգերով ճոխացնելու Ս. Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին կազմակերպած ճաշկերոյթ-պարահանդէսը:



Կիրակի 11 Փետրուարին Պրն Սինանեան եւ Օրդ Ասթարճեան մասնակցեցան Ս. Պատարագին: Սրբազան հայրը ողջունեց զիրենք: Յաւարտ Պատարագի, եկեղեցոյ Էտկարեան սրահին մէջ անոնք հանդիպեցան Սիտնիի հայկական երիտասարդական միութեանց անդամ երիտասարդներուն հետ եւ պատասխանեցին երիտասարդներուն հարցերուն: Սրբազան հայրը կատարեց փակման խօսքը եւ Պահպանիչով աւարտեց հաւաքը: Յընթացս Պատարագին, Սրբազան հոր ձեռամբ կատարուեցաւ օրհնութիւն փայտեայ խաչի մը

եւ անոր պատուանդանին, քանդակուած Հայաստանի մէջ, նուիրուած Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Անի Սողոմոնեաններու կողմէ ի յիշատակ իրենց հանգուցեալ ծնողաց: Խաչը գետեղուեցաւ խորանին կեդրոնը, փակեալ խորանի վարագոյրին առջեւ, ուր պիտի մնայ Պահքի լման տեւողութեան:

Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Անի Սողոմոնեանները իր մէջ գեղեցիկ խորհրդանիշ պարունակող Խաչը եկեղեցոյն նուիրելուն համար:



Կիրակի 11 Փետրուարին տեղի ունեցաւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին կազմակերպած ՃաշկերոյթՊարահանդէսը Թերրի Հիլզի Սիրամար Պանդոկի հանդիսասրահին մէջ, հո-վանաւորութեամբ

Սրբազան հոր: Ներկայ եղանաւ Պրն Զարեհ Սինանեան: Այս առիթով Հայրենիքէն հրաւիրուած էր հա-մազգային

համբաւի տէր երգիչ եւ արուեստագէտ Սեւակ Ամրոյեանը: Ան իր իւրայատուկ ձայնով եւ հայրենասիրական եւ հայաշունչ երգացանկով դիպեց 300է աւելի հիւրերը:



Եշ., 15 Փետրուարին - Հայրենի երգիչ Սեւակ Ամրոյեան երգահանդէս մը տուաւ Նորթ Սիտնի Լիկս Քլապի մէջ, ուրն ընթացքին Համազգային Գօլստըն Ճեմարանի եւ ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի աշակերտներ ազգագրական պարերով մեկնաբանեցին Ամրոյեանի երգերը, մեծապէս տպաւորելով 500-ի հասնող հանդիսականները:

Փարոսի խմբագրութիւնը տեղեկացուած է որ վերոնշեալ երկու ձեռնարկներէն գոյացած զուտ շահը պիտի յատկացուի 2023-ի Սեպտեմբերին Արցախէն բռնահանուած մեր քոյր-եղբայրներուն: Գովելի՛ եւ շնորհաւորելի նախա-



ձեռնութիւն:



Կիր., 18 Փետրուար – Սրբազան հայրը հանդիսապետեց ՀՕՄ-ի Մայր Սօֆիա Յակոբեանի, շրջանիս յաւերժ հեռացած ՀՕՄ-ուհիներու եւ Արցախի մեր նահատակներուն հոգիներուն ի հանգիստ հոգեհանգստեան պաշտօնին: Յաւարտ հոգեհանգստեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան կողմէ, Էտկարեան սրահին մէջ հրամցուեցաւ հոգեսուրճ, որուն մասնակցեցան Սրբազան Հայրը, քահանայ հայրերը եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեան: ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան անդամ Տիկին Նորա Սեւակեան խօսք առնելով կարեւորեց դերը ՀՕՄի հիմնադիրներուն եւ կամաւոր գործողներուն եւ շեշտը դրաւ հիմնադիրներուն առաքելութիւնը շարունակելուն եւ նոր



ՀՕՄուհիներով կազմակերպութեան շարքերը լեցնելուն վրայ: Անդրադառնալով Արխախի հերոսներուն, տիկին Սեւակեան ըսաւ. «Արցախի հերոսներուն հոգիները եկեղեցոյ մէջ հոգեհանգիստով միայն չեն հանգստանար այլ հարկ է որ իրենց ետին թողած ընտանիքները գուրգուրանքի առարկայ դառնան իսկ ՀՕՄին պարտականութիւններէն մին ալ այդ է, որովհետեւ ՀՕՄի առաքելութիւնն է Հայրենիքին պահապան կանգնիլը»:

Խօսք առաւ Սրբազան հայրը եւ դրուատանքով արտայայտուեցաւ ՀՕՄի կատարած աշխատանքին մասին, գնահատեց կանացի այս կազմակերպութեան աշխուժութիւնը եւ կարեւոր նկատեց որ իւրաքանչիւր ՀՕՄուհի քաջալերէ իր գաւակները միանալու ՀՕՄին որպէսզի բազմապատկուին անոր ծառայական աշխատանքները:



Գշ., 20 Փետրուար – Սրբազան Հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին: Ժողովները տեղի կ'ունենան ընդհանրապես դեմ առ դեմ եւ առցանց: Թեմական խորհուրդը իր լման կազմով ներկայ էր: Ժողովը ուներ խիտ օրակարգ: Ան լսեց Սրբազան հոր եւ թեմի Աւստրալիոյ Շուխերու հոգեւոր հովիւներուն զեկուցումները եւ տուաւ իր գնահատականը: Ժողովը նաեւ ամբողջացուց 18-19 Մայիսին Մելպուրնի մէջ տեղի ունենալիք Թեմական Պատգամաւորական Ժողովին օրակարգը եւ տուաւ պարտականութիւններ առ որ անկ է: Ժողովը նաեւ անդրադարձաւ «Առաջնորդարանի Բարեկամներ»ու տարեկան հաւաքին, որ տեղի պիտի ունենայ 25 Մայիսին: Ֆրէնչս ֆօրէսթի «Արարատ Կեդրոն»ի ի նպաստ կազմակերպչական աշխատանքները արդէն սկսած են տալ իրենց դրական արդիւնքները, թեմական խորհուրդը հաստատեց առկայ ձեռքբերումները եւ տուաւ իր ցուցմունքները զայն առաւել եւս մատչելի դարձնելու հայ եւ ոչ հայ շրջանակներուն: Ժողովը նաեւ նշանակեց Թեմական խորհուրդի անդամներու մասնակցութիւնը ծխական ընդհանուր ժողովներուն, որոնց անձամբ կը նախագահէ եւ կը մասնակցի Սրբազան հայրը:



Շբ., 24 Փետրուար – Ընդառաջելով Համազգայինի Թարգմանչաց Վարժարանի Տնօրէնութեան հրաւերին, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանին, Սրբազան հայրը ներկայ եղաւ Վարժարանի վերամուտի հանդիսութեան: Թեմական խորհուրդէն ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին Տէր եւ Տիկին Գեորգ եւ Մարինա Չափրագեան: Յանուն Համազգային Շանթ Մասնաճիւղի վարչութեան խօսք առաւ Տիկին Լորա Անսուրեան եւ բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր եւ Տէր հօր: Ան տեղեկացուց որ այսուհետեւ Վարժարանը ունի իր հոգաբարձական նոր կազմը: Ի գործ դրուեցաւ գեղարուեստական համեստ յայտագիր:



Իր փակման խօսքին մէջ Սրբազան հայրը դրուատանքով արտայայտուեցաւ Համազգայինի Շանթ մասնաճիւղի տարած աշխատանքին, անոր աչքէն աննկատ չէին անցած աշակերտներու շարժումները, որոնց ընդմէջէն կարելի էր վերլուծում կատարել իւրաքանչիւր աշակերտի անհատականութեան եւ նկարագրին: Սրբազանը անգամ մը եւս իր ծառայական պատրաստականութիւնը յայտնեց յօգուտ Հայ դպրոցին, ի մասնաւորի Թարգմանչաց Վարժարանին, որ Առաջնորդարանէն շատ քիչ հեռաւորութեան վրայ կը գտնուի: Գնահատեց ուսոցիչներուն եւ ծնողներուն զոհաբերութիւնը եւ հակառակ շարքաթը մի քանի ժամ պարապելուն՝ անոնք կը յաջողցնեն նաեւ գնահատելի գեղարուեստական ծրագիրներ: Մեծապէս գնահատելով ծնողքին ներդրումը հայերէն լեզուն սիրցնելու գործընթացին մէջ, Սրբազանը հրամայական նկատեց ծնողաց դերը իրենց զաւակներուն հայեցի դաստիարակութեան ու անոնց հայկականութեան շարունակականութեան մէջ:



Փարոսի խմբագրութիւնը նկատած է եւ հաստատած որ Սրբազան հայրը միշտ գօտեպնդուած կը վերադառնայ Առաջնորդարան ամէն անգամ որ վարժարան մը կ'այցելէ: Պարագան տարբեր չէր այսօր ալ...:



Կիր., 25 Փետրուար – Ընդառաջելով Ryde Hunters Hill Symphony Orchestra-ի հիմնադիր նախագահ Տիկին Ռիթա Լեփեճեանի, Սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ սոյն նուագախումբին «Khachaturian Greats» ելոյթին, որ տեղի ունեցաւ North Ryde School of Arts Community Centre-ի մէջ: Սրբազանին կ'ընկերակցէին Արժանապատիւ Տէր Նորայր եւ Պարթեւ Աւագ ինչպէս նաեւ Տէր Աւետիս քահանայ հայրերը: Խումբը ներկայացուց Արամ Խաչատուրեանի Սուրբերու Պարը՝ Sabre Dance, Adagio of Spartacus & Phrygia, Violin Concerto, Masquerade Suite ղեկավարութեամբ Քարլոս Ալվարատոյի: Ներկայ էին նաեւ պետական եւ Բայտ քաղաքապետարանի պատասխանատու անձինք:

Աւարտին խօսք տրուեցաւ Տիկին Ռիթա Լեփեճեանին, որ յստակացուց թէ Արամ Խաչատուրեան Հայ էր եւ ոչ թէ Սովետ արուեստագէտ մը, բան մը որ ներկաներէն շատեր (ներառեալ նուագախումբի արուեստագէտներ) տեղեակ չէին: Փարոսի հարցումին պատասխանելով Տիկին Լեփեճեան յայտնեց որ այս ձեռնարկը կ'ազմակերպելու գաղափարը իր մտքին մէջ ծագած էր երբ 2023-ին Հայաստան կը գտնուէր եւ ուր կը տօնուէր Խաչատուրեանի ծննդեան 120-ամեակը:

Սրբազան հայրը, քահանայ հայրերը եւ ներկայ քառասունէ աւելի Հայ անհատներ մեծապէս գնահատեցին այս աննախընթաց ձեռնարկը: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Տիկին Լեփեճեանը եւ կը յուսայ որ հայ մեծերը ծանօթացնող նման այլ ձեռնարկներ կը կ'ազմակերպուին հետագային:



Ռշ., 28 Փետրուար – 2024 թուականի Լսարանական առաջին առցանց դասախօսութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7-ին (Սիտնիի ժամով), նախագահութեամբ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեանին եւ հանդիսավարութեամբ դիւանապետ Նշան Պասմաճեանին: Դասախօսն էր Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մակար Եպիսկոպոս Ազգարեան: Նիւթ՝ «Բերիոյ Հայոց Թեմը Այսօր – Պատմական Անցեալ – 2023-ի Երկրաշարժի Հետեւանքներ – Կազմակերպչական եւ Յարաբերական Աշխատանքներ – Ապագայի Մտահոգութիւններ»:

Ձեռնարկը սկսաւ Հայկազուն Սրբազան հօր աղօթքով, որմէ ետք հանդիսավարը ներկայացուց Մակար Սրբազանը, որուն կենսագրական գիծերը կը ներկայացնենք ստորեւ.

Մակար Եպս. Ազգարեան աւագանի անունով՝ Եսայի, ծնած է Պէրուր 1972-ին: Նախնական կրթութիւն - Այնճարի «Յառաջ» վարժարան: Երկրորդական ուսում - Այնճարի «Գալուստ Կիլպէնկեան Գոլէճ» եւ Պուրճ Համուտի «Շամլեան Թաթիկեան» Երկրորդական Վարժարան: 1977-1999 Դպիր, Ուրարակիր եւ Սարակաւագ Այնճարի «Ս. Պողոս» եւ Պուրճ Համուտի «Ս. Աստուածածին» եկեղեցիներու մէջ: 1989-1999 զբաղած է ոսկերչութեամբ: 1999 - Կուսակրօնութեան կոչումին ընդառաջելով, մուտք կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, Պիքֆայա: 2001 – կը ձեռնադրուի եւ կ'օժուի կուսակրօն քահանայ եւ կը վերակոչուի Մակար արեղայ: 2001-2011 - Դպրեվանքի հսկիչ ու փոխ տեսուչ: Կը դասաւանդէ Հին եւ Նոր Կտակարաններու ներածութիւն, միաժամանակ Դպրեվանքի երգչախումբի ղեկավար եւ ընդհանուր դպրապետ: 2004 (Յուլիս)-2005 (Մեպտեմբեր) Յունաստան, հոգևոր հովիւ Թեսաղոնիկէ Քաղաքի եկեղեցու: 2009 - Վարդապետական կոչում – Վարդապետական աւարտաձառ՝ «Աստուած - Մարդ Յարաբերութիւնը Քրիստոսով»: 2010 – Կը հետեւի Մարտինիոյ L'Insituto D'Euro Mediteraneo-ի Vocal Anatomy-ի խտացեալ դասընթաց-քներուն:

2011-2018 ծառայած է Թեհրանի Հայոց Թեմին ներս, որպէս Առաջնորդի օգնական եւ ապա փոխանորդ եւ միաժամանակ կրօնական ժողովի ատենապետ: Բեղուն աշխատանք ծաւալած է Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի ծիրէն ներս:

2013-ին ներկայացուցած է իր Ծայրագոյն վարդապետութեան աւարտաճառը՝ «Ամենաարքուհի Մարիամ Աստուածածնի Յաւերժ Կուսութիւնը Ըստ Առաջին Հինգ Դարերու Եկեղեցական Հայրերու եւ Մեր Եկեղեցոյ հասկացողութեան» եւ ստացած է Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն:

27 Ապրիլ 2014-ին կը ձեռնադրուի եւ կ'օծուի եպիսկոպոս:

2018-ի Հոկտեմբերին Թեհրանէն կը վերադառնայ Կաթողիկոսարան, եւ մինչեւ 2022-ի սկիզբը կը վարէ Կաթողիկոսարանի մայր տաճարի լուսարարապետութեան պաշտօնը, միաժամանակ կը դասաւանդէ Դպրեվանքէն ներս: 2022-ին՝ Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ տնօրէն:

2 Դեկտեմբեր 2022-ին կ'ընտրուի Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ, ուր կը շարունակէ իր առաջնորդական ծառայութիւնը մինչեւ այսօր:



Անդամ է Ուղղափառ Եկեղեցիներու եւ Աստուածաշնչական Միացեալ Ընկերութիւններու միջեւ համագործակցութեան մնայուն Յանձնաժողովին, ինչպէս նաեւ՝ Կաթոլիկ Եկեղեցոյ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ Աստուածաբանական երկխօսութեան մնայուն Յանձնաժողովին:

Ունի թէ՛ հեղինակային եւ թէ՛ թարգմանական բազմաթիւ աշխատանքներ, որոնցմէ ոմանք տպուած են:

2004-էն օրս Սրբազան հայրը յղուածագիր է Կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնական Ամսագրին:

Բերիոյ Հայոց Թեմին Պատմութեան մասին, Սրբազան հայրը տուաւ հետեւեալ բացատրութիւնները, զորս ամփոփ կը ներկայացնենք ստորեւ.

Բերիոյ Հայոց Թեմը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական կարեւորագոյն թեմերէն մէկը կը նկատուի: Թէեւ իբրեւ կազմակերպուած գաղութ եւ թեմ հասկացողութեամբ արձանագրութիւններ մեզի հասած են 1355 թուականէն, սակայն հայերու ներկայութիւնը Սուրիոյ տարածքին շատ աւելի վաղ անցեալէն կը սկսի՝ հասնելով մինչեւ Մեծն Տիգրանի օրերը:

Պատմութիւնը կը վկայէ, որ Հայկական լեռնաշխարհի եւ Սուրիոյ միջեւ յարաբերութիւնները հազարամեակներու պատմութիւն ունին:

Եփրատ ու Տիգրիս գետերը Հայաստանը կապած են հարաւի երկիրներուն հետ: Պատմութեան տարբեր հանգրուաններուն հայերը կայք հաստատած են Սուրիա, Միջերկրականի արեւելեան ծովեզերքը եւ Միջագետք:

Օտար եւ հայ աղբիւրներ միահամուռ կը վկայեն, թէ Մեծն Տիգրանի Հայկական Կայսրութեան (ՔԱ 83-64) հարաւային սահմանները հասած են մինչեւ Պաղեստին, եւ Անտիոք դարձած է Հայոց կայսեր մայրաքաղաքներէն մէկը, իսկ Լաթաքիան ալ վերածած է գլխաւոր նաւահանգիստի: Այդ ընդարձակ կայսրութեան բոլոր ժողովուրդները իրարու հետ ուղղակի յարաբերութեան մեջ եղած են: Միաժամանակ՝ Տիգրանակերտ (հիմնուած ՔԱ 77-ին) որպէս մշակութային եւ վաճառականական մեծ եւ կարեւոր կեդրոն մը, Հայաստանը կամրջած է Սուրիոյ եւ Միջագետքի հետ:



Յետ Քրիստոս Ժամանակահատուած

Հայեր 5-7 դարերուն, երբ սկսած են որպէս ուխտաւոր Երուսաղէմի սրբավայրերը այցելել, այդ ճանապարհին ընթացքին անցած են Հալէպ կամ Բերիա քաղաքէն: Եւ ուխտագնացութիւններու զարգացումով հայ ուխտաւորներու համար Հալէպը սկզբնաւորութեան եղած է հոգեւոր հանգստեան կայան մը եւ հետագային դարձած է ազգային-եկեղեցական կենսունակ կեդրոն մը՝ մինչեւ առանձին Թեմի մը վերածուիլը: Ասոր խօսուն վկան կարելի է նկատել Հալէպի Երուսաղէմապատկան Հոգետունը, կառուցուած 1624ին, որպէս Ս. Յակոբայ վանքին «տուն» կամ «օթեւան» Մերձաւոր Արեւելքէն դէպի Երուսաղէմ երթեւեկող հաւատացեալներուն համար: Նոյնը պատահած է նաեւ Լաթաքիոյ պարագային եւ աստիճանաբար, համաձայն պատմական տուեալներու,



Տրդ դարուն Լաթաքիոյ հայութիւնը բազմացած է եւ 12րդ դարուն ունեցած է նոյնիսկ իր եպիսկոպոսը:

14րդ դարու առաջին կիսուն Հալէպ դարձած է հայկական բարգաւաճ կեդրոն մը: Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցին յիշուած է 1429-ին (595 տարուայ անցեալ) իսկ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին 1476ին (548 տարուայ անցեալ):

1499-1500ին, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ շրջափակէն ներս կառուցուած է «Թագաւորական Դարպաս», այլ խօսքով Առաջնորդարան:

Առաջնորդարանը ընդարձակուելով ծառայած է նաեւ որպէս Միսի կաթողիկոսներու ժամանակաւոր նստավայր եւ շուրջը ծաղկած է Հալէպի նշանաւոր Դասատունը (16-17րդ դարեր), արուեստի եւ գիտութեան իսկական դպրոց կեդրոն մը, որուն կողքին գոյութիւն ունեցած է նաեւ եկեղեցի մը: Դասատունը ունեցած է գրչութեան, ծաղկումի, մանրանկարչութեան եւ կազմարարութեան բաժիններ:

Ս.Քառասնից Մանկանց մայր եկեղեցին

Հալէպի Մալիպիէ թաղամասի Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցին 14րդ դարէն մինչեւ այսօր Բերիոյ Թեմի առաջնորդանիստ եկեղեցին է: Այնտեղ նոյնիսկ տեղի ունեցած է միւռնօրհնութիւն:

Այս դարերուն նաեւ գաղութը ապրած է փառքի օրեր, երբ հայ վաճառականներ սկսած են Հայաստանի ամէն կողմերէն Հալէպ ժամանել: Հայեր արհեստներու եւ մշակոյթի զանազան բնագաւառներէ ներս արձանագրած են յատկանշական նուաճումներ:

Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցոյ մէջ այսօր կը գտնուին բացառիկ խնամքով պահուած 13-րդ դարէն մինչեւ 19րդ դար արժէքաւոր սրբապատկերներ եւ սպասներ: Նշանակալի եւ կարեւոր տեղ կը գրաւեն վերջին դատաստանի հսկայ սրբապատկերը, Ս. Մինասի եւ Սրբոց Քառասնից մանկանց սրբանկարները:



Հայերու դէպի Սուրիա գաղթի Գլխաւոր 6 հանգրուանները

1.- Ըստ պատմական հաւաստի տուեալներու, հայկական առաջին գաղթը դէպի Սուրիա տեղի ունեցած է 6րդ դարուն, Պարսից Խոսրով Ա. թագաւորի օրօք: 539-ին տիրելով Անտիոքի եւ Եդեսիոյ ան մեծ թիւով գաղթականներ փոխադրած է այդ քաղաքները, ուր հայեր մեծամասնութիւն կազմած են: Դար մը ետք, երբ Հալէպ իր փառքի օրերը ապրած է Օմայաւորներու խալիֆայութեան շրջանին (661-750), հայերու հետ ունեցած յարաբերութիւնները խիստ յատկանշական եղած են:

2.- Հայերու դէպի Սուրիա երկրորդ գաղթը տեղի ունեցած է 8րդ դարուն (717-728): 10րդ դարուն Շուլըրիի շրջանի Կարմիր Վանքը եղած է հոգեւոր-մշակութային մեծ կեդրոն մը:

3.-Ապպասեան ԽալիՖայութեան շրջանին (750-1258), Հայեր փախչելով Բիզանդական բռնատիրութենէն եւ Սելճուք-թուրքերու հալածանքներէն, գաղթած են Սուրիա ու Միջագետք: Մինչ այդ հայկական երրորդ գաղթը դէպի Սուրիա իրականացած է 973-992 տարիներուն, եւ հայեր տարածուած են Սուրիոյ արեւմտեան շրջանները: Կը կարծուի թէ այդ օրերուն հայեր հաստատուած են Արամօ, Ղընեմիէ, Եագուպիէ, Լաթաքիա, Քեսապ, Սուէտիա (Սուսա լեռ) եւ շրջակայքի գիւղերը:



4.-13րդ դարու երկրորդ կիսուն, հայկական գաղթերը աճ արձանագրած են մոնկոլ - թաթարական արշաւաքներուն պատճառով (1220-1468):

5.- Հայկական մեծագոյն գաղթերը իրականացած են Օսմանեան կայսրութեան հալածանքներուն իբրեւ արդիւնք՝ 1876ին, 1895ին, 1909ին եւ մանաւանդ 1915ի Մեծ Եղեռնին ու Հայկական Կիլիկիոյ Աղէտին՝ 1922ին, ստուարացնելով Սուրիոյ տարածքին հայութեան թիւը:

6.- Հայկական վերջին գաղթը դէպի Սուրիա եղած է 1939ին, երբ Ֆրանս-Թրքական համաձայնագիրով Ալէքսանտրէթի Մանճաքը կցուեցաւ Թուրքիոյ:

19րդ դարուն նոր ոգեւորութիւն տիրած է հայ համայնքին ազգային-եկեղեցական կեանքէն ներս, երբ 1875ին Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան գործունէութիւնը ձեւաւորուած է՝ Ազգ. Սահմանադրութեան տրամադրութիւններուն համաձայն:

Ազգ. Առաջնորդարանը ճակատագրական դեր ունեցած է 20րդ դարու սկիզբը, Մեծ եղեռնի օրերուն, երբ Հալէպ քաղաքն ու շրջակայքը դարձած են տարագրեալ հայ ժողովուրդին մեծագոյն հաւաքավայրը. Ս. Քառասնից Մանկանց մայր եկեղեցոյ շրջափակը կը մնայ արքայական խլեակներու տառապանքին ամենէն խօսուն վկայարանը:

Նստավայրն ու Թեմին մաս կազմող շրջանները

Բերիոյ Հայոց Թեմի նստավայրը ի սկզբանէ եղած է Հալէպ քաղաքը:

Թեմին մաս կը կազմեն Հալէպ (նստավայր), Ճէզիրէի Հայոց Առաջնորդական փոխանորդութիւնը (կ'ընդգրկէ Գամիշլի, Տէրիք (Մելքիէ), Րաս Ուլ Այն, Հասիչէ), Տէր Զօր, Բաքրա, Թէլ Ապիատ, Եագուպիէ, Թարթուս, Պանիաս, Լաթաքիա, Քեսապ ու շրջակայքի գիւղեր՝ Ղընեմիէն եւ Արամն:

Եկեղեցիներ

• Ս. Քառասնից Մանկանց, Ս. Գիգոր Լուսաւորիչ, Ս. Գէորգ, Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ:

Վարի եկեղեցիներու ցանկով՝ եկեղեցիներու ընդհանուր թիւն է՝ 17

- Ռաս ուլ էյն՝ Ս. Յակոբ եկեղեցի
- Թէլ Ապիատ՝ Ս. Խաչ եկեղեցի
- Մարկատ՝ Ս. Յարութիւն Մատուռ յուշակոթող
- Տէր Զօր՝ Սրբոց Նահատակաց եկեղեցի
- Բաքրա՝ Ս. Աստուածածին եկեղեցի
- Եագուպիէ՝ Ս. Աննա հրաշագործ մատուռ 1380—Ս. Թեոդորոս մատուռ՝ 1770
- Լաթաքիա՝ Ս. Աստուածածին եկեղեցի (1254) հոգետուն համալիրը՝ 1755:
- Քեսապ՝ Ս. Աստուածածին եկեղեցի, մատուռը 1600ական թուականներուն:

Ներկայ եկեղեցին կառուցուած է 1880ին

- Գարատուրան՝ Ս. Աստուածածին եկեղեցի 1890:
- Ղընեմիէ՝ Ս. Գէորգ պատմական եկեղեցի, 1700ական թուական 1875ին նորոգուած է:
- Արամօ՝ Ս. Ստեփանոս 13-րդ դար: Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ:



Իւրաքանչիւր եկեղեցի ունեցած է նաեւ իր Կիրակնօրեայ դպրոցը: Ներկայիս բերիոյ Թեմէն ներս կը գործեն 6 Կիրակնօրեայ վարժարաններ, շուրջ 450 աշակերտներով:

Վարժարաններ

1930ական թուականներուն, Առաջնորդարանի հովանաւորութեամբ գործած են 23 հայկական վարժարաններ 4100 եւ աւելի երկսեռ աշակերտ աշակերտուհիներով ու 130 ուսուցիչներով: Ասոնց զուգահեռ գործած են նաեւ միութենական եւ համայնքային դպրոցներ: 1960-70ական թուականներուն, Հալէպի մէջ եւ այլուր, առաւելաբար հայաթափումի որպէս հետեւանք՝ շարք մը վարժարաններ փակուած են:



Դպրոցաշինութեան իրագործումներուն մէջ նախախնամական դեր ունեցած են ՀԲԸՄ, ՍՕԽ (ՀՕՄ), եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը:

Տասնամեակ մը առաջ Հալէպի եւ Թեմի շրջաններուն մէջ կը գործէին 20 հայկական վարժարաններ (17 ազգային եւ 3 միութենական): Իսկ ներկայիս՝ 9 Ազգային եւ 3 միութենական (Կիլիկեան, Կրթասիրաց եւ Լազար Նազարեան Գալուստ Կիւլպէնկեան Կեդր Վարժ.) կը գործեն նաեւ քոյր համայնքներու դպրոցներ:

- Հալէպ՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան, Ազգային Միացեալ եւ մանկապարտէզ:
- Դամասկոս՝ Ազգ. Միացեալ Ճեմարան
- Լաթաքիա՝ Ազգ. Ս. Նահատակաց Վարժարան
- Քեսապ՝ Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան
- Գամիշլի՝ Ազգ. Եփրատ Միջնակարգ- Երկրորդական Վարժարան
- Հասիչէ՝ Ազգ. Մերոպեան Վարժարան
- Տէրիք՝ Ազգ. Ազատութիւն Վարժարան
- Բաս Ուլ Էյն՝ Ազգ Մերոպեան Վարժարան- Ս. Աստուածածին եկղ.



- Տէր Զօր՝ ունեցած ենք Ազգ. Վարժարան եւ Ս. Հոնիփսիմէ եկեղեցին:

- Բաքքա՝ (Թէլ Ապիատ եւ Այն Արապ) Ազգ. Նուպարեան Վարժարան եւ Ս. Աստուածածին եկեղեցի:

Ի դէպ

Հալէպի մէջ առաջին մանկապարտէզը հիմնուած է 1858ին:

Հալէպի Վարդուհեաց առաջին աղջկանց վարժարանը հիմնուած է 1867ին:

Բերիոյ Թեմի առաջին Ուսումնական Խորհուրդը կազմուած է 1893ին:

Մշակութային միութիւններ

- Կրթասիրաց Մշակութային Միութիւն,
- Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութիւն,
- Հայ կրթական եւ մշակութային միութիւնը, Համազգային,
- Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն (ՀԵԸ),
- Թէքէեան Մշակութային Միութիւն,
- Ազգային Մշակութային Միութիւն,
- Ուրճայի Վերածնունդ Մշակութային Միութիւն,
- Նոր Սերունդ Մշակութային Միութիւն եւ
- Կիլիկեան Մշակութային Միութիւն:

Հականէ յանուանէ չիշելու համար, Մշակութային միութիւններէն շատեր ունին իրենց երգչախումբերն ու պարախումբերը, ասմունքի եւ թատերական միաւորները, ինչպէս նաեւ երաժշտական եւ նկարչական դպրոց-ուսումնարանները, կերպարուեստի ակադեմեան եւ շեփորախումբերը, որոնք Բերիոյ Հայոց Թեմի տարածքին ազգային-մշակութային կեանքը կը կազմակերպեն:

Հալէպի մէջ կը գործեն նաեւ Ուսանողական միութիւններ, հանդիսասրահներ, գրադարաններ, Արամ Մանուկեան



ժողովրդային տունը, որ իր հիմնադրութենէն ի վեր որոշիչ դերակատարութեամբ շեշտակի տեղ կը գրաւէ գաղութահայ կեանքէն ներս: Չարեհեան Գանձատունը, Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցոյ շրջափակին մէջ գտնուող նախկին Ս. Աստուածածին եկեղեցոյ կառոյցէն ներս: Չարեհեան գանձատան մէջ ամփոփուած են աւելի քան 650 թանկարժէք եկեղեցական սպասներ, իրեր, հանդերներ, աւետարաններ, սրբապատկերներ, խեղեցէններ, ասեղնագործութիւններ, գորգեր եւ այլ գանձեր, որոնք կը ներկայացնեն մեր ազգային պատմութեան ու մշակութին թանկագին նշխարները:

Հարկ է յիշել նաեւ Համազգային Հայագիտականը, որ հայերէն լեզուի, եւ ընդհանրապէս հայոց պատմութեան, գրականութեան եւ մեր հոգեմտաւոր արժէքներու պահպանման ծիրէն ներս համբուրելի աշխատանք կը տանի:

Բարեսիրական մարզէն ներս կը գործեն

ՀԲԸՄ, ՍՕԻՆ, Ազգ. Պատսպարան, Հայ Ծերանոցը, Հաւուրտ Գարակէօզեան Հաստատութիւնն ու Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը, Բերիոյ Հայոց Թեմի Ընկերային Ծառայութեան Խորհուրդը եւ Եկեղեցիներու Աղքատախնամ մարմինները եւ «Արեւիկ» մտքով թերաճ հայ մանուկներու կեդրոնը, որ կը վայելէ հայ երեք հայմայնքապետերու հովանաւորութիւնը:

Գործող են նաեւ Այթունեան-Մազլումեան հայկական Հիւանդանոցը եւ Տք. Ռոպէր Ճէպէճեանի ակնաբուժարանը: Մինչեւ 2012 կը գործէր նաեւ Աստուրեան հայկական հիւանդանոցը:

Հայրենակցական 12 միութիւններ

*Տիգրանակերտի: Ունի սեփական կեդրոնատեղի:

*Մարաշի հայրենակցական միութիւն:

*ՈւրՖայի հայ երիտասարդաց միութիւն, ունի սեփական կեդրոնատեղի:

*Ձէթունի Հայրենակցական միութիւն, ունի սեփական կալուած:

*Բալուի Հայրենակցական միութիւն:

*Քիլիսի հայրենակցական միութիւնը: Ունի սեփական կեդրոնատեղի:

*Պէրէճիքի հայրենակցական միութիւն:

*Կարմուճի տիկնանց միութիւն:

*ՈւրՖայի Տիկնանց միութիւն:

*Մուսա լերան հայրենակցական միութիւն

*Եագուպիէի Ս. Աննայի հայրենակցական միութիւն-եղբայրակցութիւն:

*Տարօն Տուրուբերանի հայրենակցական միութիւն:

Մամուլ

Սուրիական մամուլը եւ ի մասնաւորի հալէպահայ մամուլը ուրոյն տեղ կը գրաւէ հայ մամուլի պատմութեան մէջ, շուրջ 125 թերթերու շոշափելի ժառանգութեամբ: Հալէպահայ լրագրողներ յատկանշական դեր ունեցած են սուրիական տեղական մամուլի զարգացման մէջ:

Հայերէն անդրանիկ օրաթերթը «Հայ Չայն» 1918-19, «Տարագիր»ը, «Եփրատ»1919 երկօրեայ թերթը, «Սուրիական Սուրհանդակ» 1919-22, «Սուրիական Մամուլ» 1922-27, «Եփրատ» օրաթերթ 1927-47, «Սուրիա» օրաթերթ, «Արեւելք» օրաթերթ 1946-63:

«Մուրիահայ Տարեցոյց» (1924-1926) Ազգ. Առջ.ի Պաշտօնաթերթ:

«Տաթել» (1925-1930) խմբագիր՝ Առաջնորդ Արտաւազդ Արք. Սիրմէեան.

«Մուրիական Ալպոմ» (1927-1929):

«Տարօն» (1949)

«Հայ Տարեգիրք» (1956)

«Գեղարդ» (1975-էն վեց թիւեր)


Ամսագիրներէն յիշարժան են «Նայիրի» (1941-1949) խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեան

«Բուրաստան» (Մանկապատանեկան երկամսեայ 1950-1958)

1950-ական թուականներէն մինչեւ այսօր յատկանշական տեղ կը գրաւեն աշակերտական եւ ուսանողական թերթերը:

Հալէպի մէջ լոյս կը տեսնէ Ազգ. Առաջնորդարանի պաշտօնաթերթ «Գանձասարը», որ 1978-ին «Օշական» անունով կը սկսի լոյս տեսել որպէս պարբերաթերթ. ապա կը վերածուի երկամսեայի, ապա երկշաբաթաթերթի: Այսօր «Գանձասար» որպէս շաբաթաթերթ լոյս կը տեսնէ անխափան:

Ազգ. Առաջնորդարանը ունի կրօնական «Օշական» լրատուն:



Մարզական Միութիւններ

Հայ Մարմնամարզական Միութիւն (ՀՄՄ), ունի սեփական ակումբ, սկաուտական շարժում եւ փողերախումբ: Կը մասնակցին միջ-մասնաճիւղային խաղերու եւ միջ-շրջանային սկաուտական բանակումներու: Գարատուրանի մէջ ունի իր սեփական բանակավայրը: Պասքէթ+Ֆութպոլ:


Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (ՀՄԸՄ), ունի սկաուտական շարժում: Միութիւնը ունի մարզավայր պարտէզ ու ակումբ, Պասքէթպոլի, թենիսի եւ Ֆութպոլի դաշտ: Մասնակից միջ-մասնաճիւղային նաւասարդեան խաղերու: Ունի փողերախումբ եւ գործօն ներկայութիւն է տեղական թէ համահայկական բանակումներուն: Քեսապի մէջ ունի սեփական բանակավայր:

Գերմանիկ Վասպուրական Մարզական Միութիւն, ունի սեփական ակումբ եւ երկար տարիներ եղած է դափնեկիրը Մուրիոյ Ֆութպոլի ախոյանութեան: Ունի փողերախումբ:

ՀԵԸ Հայ Երիտասարդական ընկերակցութիւն, որ ծաւալած է մարզական, սկաուտական, մշակութային եւ ընկերային գործունէութիւններ: Ունի փողերախումբ եւ կը մասնակցի միջ-շրջանային բանակումներու: Օժտուած է սեփական ակումբ- ընտանեկան պարտէզով:

Կրօնական Դաստիարակութիւն

Կրօնական դաստիարակութեան գլխաւոր աշխատանքներէն են կրօնական դասախօսութիւններու շարքեր, երիտասարդական հաւաքներ, կրօնական մատենաշարի եւ այլ հոգեւոր բովանդակութիւն ունեցող գիրքերու հրատարակութիւն, ուսուցիչներու վերաորակաւորման համար կազմակերպուած դասընթացքներ, համագումարներ, աստուածաշնչական սերտողութիւններ, ու լսարաններ եւ Կիրակնօրեայ դպրոցներու աշխուժացում:



Կիրակնօրեայ դպրոցներու գաղափարը ծնունդ առած է Թեմի Ազգ. Վարչութեան Կրօնական ժողովին կողմէ եւ հաստատուած է 28 Յունիս 1930ին Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. եւ Բարգէն Ա. Հայրապետներու սրբատառ կոնդակով: Ուստի, առաջին կիրակնօրեայ դպրոցը հիմնուած է Հալէպի մէջ, 24 Նոյեմբեր 1929, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ շրջափակէն ներս, եւ կը շարունակէ մինչեւ այսօր: 1908ին Ազգ. Առաջնորդարանի նախաձեռնութեամբ, Հալէպի մէջ գործած է Ազգ. Լսարանը՝ սատարելու համար հայ պատանիներու առողջ դաստիարակութեան:

Սուրիական բանակին մեջ ծառայող աստիճանաուորներ

Զօրավար Արամ Գարամանուկեան
Գնդապետ Ժոզեֆ Պայրամեան

Սուրիական Խորհրդարանի անդամ եղած են

Հալեպահայ Հրաչ Փափազեան, Մեթր Գրիգոր Էպլիդաթեան, Լեւոն Ղազալ, Ռուբէն Տիրանեան, Երկրաչափ Սիմոն Լիպարեան, Մնպուլ Մնպուլեան, Ժիրայր Րէիսեան: Նորա Արիսեան, որ ներկայիս Սուրիոյ դեսպանն է Հայաստանի մէջ: Լիւսի Իսկէնեան:

Գաւազանգիրք

Բերիոյ Հայոց Թեմի գաւազանագիրքը 1432-էն մինչեւ օրս կ'ընդգրկէ 63 թեմակալ առաջնորդներ, որոնց առաջինն է Յովակիմ Արք. Բերիացի (1432-1442): Մօտաւորապէս 600 ամեակներու երկարաձիգ ժամանակաշրջան մը, որ անկասկած ազգային, եկեղեցական, կրօնական, կրթական, մշակութային, բարեսիրական, միութենական ու մարզական կեանքի շարունակական եւ աշխոյժ գոյութեան մը կենդանի վկայութիւնն է:

Սուրիացի ժողովուրդը բարձր կը գնահատէ հայ ժողովուրդի գաւակներուն դերակատարութիւնը ի խնդիր սուրիական հարենիքի յառաջդիմութեան: Հայեր արեան գնով պաշտպանած են ասպնջական Սուրիոյ ազատութիւնն ու անկախութիւնը, վերջին տասնամեայ պատերազմին սուրիահայեր հաւատարիմ մնալով շարունակեցին պահել իրենց գոյութիւնը Սուրիոյ մէջ եւ իրենց ներդրումը բերել անոր ազատագրումին համար:

Սուրիական կառավարութիւնը 1946-ին, Սուրիական Արժանեաց Առաջին կարգի Շքանշանով պատուած է այդ օրերու Բերիոյ Թեմի Առաջնորդ Զարեհ Եպս. Փայասլեանը:

Ազգ. Առաջնորդարանը, իբրեւ համայնքի կեդրոն, թեմակալ Առաջնորդներուն գլխաւորութեամբ եւ Ազգային իշխանութիւններով միշտ յարգալից յարաբերութիւններ ունեցած է սուրիական ասպնջական հայրենիքի իշխանութեանց հետ:

Անդրադառնալով 2023-ի Փետրուարին Սուրիոյ մէջ պատահած մահաբեր երկրաշարժին, Մակար Սրբազան բացատրեց տարողութիւնը երկրաշարժին եւ անոր պատճառած աղէտին, որ «աղ եւ պղպեղ» դարձաւ այն բոլոր դժուարութեանց վրայ գորս դիմագրաւած էր Սուրիոյ եւ մանաւանդ Հալեպի հայութիւնը, այդ ըլլայ ապահովական բայց մանաւանդ տնտեսական բնագաւառներուն մէջ: Բացատրութիւն տուաւ թէ ազգային, համայնքային, միջ-համայնքային եւ միջ-սուրիական կազմակերպութիւններու միջեւ ինչպիսի եղբայրական զօրակցութիւն ստեղծուած էր որ կը գոյատեւէ մինչեւ օրս: Ան իր շնորհակալութիւնը յայտնեց Հայկազուն Սրբազան հօր, որ աղէտէն քիչ ժամանակ ետք խումբ մը Քրիստոնեայ համայնքապետերու հետ Աւստրալիայէն այցելած էր Հալեպ, միասնական զօրակցութիւն յայտնելու նիւթապէս թէ բարոյապէս:

Մակար Սրբազանը յայտնեց որ հայկական բոլոր միութիւնները, վարժարանները բարձր տրամադրութեամբ, զիշեր ցերեկ կ'աշխատին կողք կողքի համայնքային բոլոր ենթակառոյցները ամուր պահելու: Դժուարութիւնները մեծ են բայց զանոնք յաղթահարելու կամքը աւելի՛ մեծ է եւ աշխատանքի լծուողներու վճռականութիւնը անգերազանցելի է: Ապագայատեսիլ Սրբազան հայրը, հակառակ գոյութիւն ունեցող ահռելի դժուարութիւններուն, Սուրիահայութեան ապագան փայլուն կը տեսնէ եւ կը յուսայ որ կարգ մը Աւստրալիա գաղթած Սուրիահայեր կը վերադառնան եւ մասնակից կը դառնան գաղութային վերակերտման գործունէութեան:



Իր եզրափակիչ խօսքերուն մէջ Հայկազուն Սրբազան բարձր գնահատեց Մակար Սրբազանին անհատական եւ ազգային իշխանութեանց այս դժնդակ պայմաններուն մէջ տարած հսկայածաւալ աշխատանքը յօգուտ Սուրիահայութեան եւ Սուրիոյ, մանաւանդ Սրբազան հօր լուստեսութիւնը ապագային նկատմամբ, անդրադառնալով Հալէպի հայութեան միջնաբերդ ըլլալու հանգամանքին եւ մաղթեց որ Սուրիան կը վերագտնէ իր անդորրութիւնը եւ սուրիահայութիւնը իր անցեալի գործութիւնը եւ կը շարունակէ կատարել իր առաջնորդողի պարտականութիւնները: Դասախօսութիւնը եւ բոլոր խօսքերը, հարցումներն ու անոնց պատասխանները ունկնդրելու համար բարեհաճեցէք նկատի ունենալ ետօքիպեան հետեւեալ յղումը.



[Online Lecture Բերիոյ Հայոց Թեմը Այսօր 28 February 2024 \(youtube.com\)](https://www.youtube.com/watch?v=...)

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ**

**Տեղի կ'ունենայ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՄԱՐՏ 2024-ի
երեկոյեան ժամը 7-ին**

**Կը բանախօսէ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒՄ ՏԷՐ ԹԱԴԷՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ
Հոգեւոր Հովիւ Գոշավանքի (Տաւուշի Մարզ)**

Նիւթ՝ ԳՈՇԱՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

**Ստանալու համար Չումի Յղումը բարեհաճեցէք արձանագրուիլ
Պրն Նշան Պամաճեանի կամ Տիկին Նանոր Մանճիկեան-Աշրգեանի մօտ:
diocese@armenian.com.au ~ Հեռաձայն՝ 91614000**

Լուրեր Ծուխերէն

Ուէնթուրթովիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Շր., 3 Փետրուար – Ընդառաջելով Համազգայինի Նուպար Խաչատուրեան Թատերախումբի հրաւերին, Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, ընկերակցութեամբ երէցկնոջ, ներկայ եղաւ «Հայերը Ինչ Կ'ըսեն» թատերախաղի բեմադրութեան:



Եշ., 6 Փետրուար – Երեկոյեան ժամը 6-ին, Տէր Միւռն Ս. Պատարագ մատուցեց Սրբոց Վարդանանց Տօնին առթիւ եւ յաւուր պատշաճի քարոզեց:

Շր., 10 Փետրուար – Ընդառաջելով Սրբազան հօր հրաւերին, Առաջնորդարանին մէջ, Տէր Միւռն եւ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբի ներկայացուցիչներ ներկայ գտնուեցան ՀՀ Սփիւռքի գործերու յանձնակատար Պարոն Զարեհ Սինանեանի հետ հանդիպման:



Կիր., 11 Փետրուար – Յաւարտ Պատարագի, տեղի ունեցաւ Տեառնընդառաջի երեկոյեան ժամերգութիւն, Անդաստան եւ երեխաներու Սուրբ Խորանին նուիրումի արարողութիւն, ինչպէս նաեւ օրհնութիւն խորանի խաչի մը, որ իր մէջ կը պարունակէր մասունքներ Հայոց Ցեղասպանութեան նահատակներէն, նուիրուած Տէր եւ Տիկին Հրայր եւ Անի Տէր Պետրոսեաններու կողմէ: Աւանդական խարոյկէն ետք, Տիկնանց Յանձնախումբն ու Երիտասարդացի վարչութիւնը ներկաներուն հրամցուցին համեղ իրաքեան ճաշեր: Հաւատացեալները տուն վերադարձան իրենց հետ տանելով Քրիստոսի Լոյսը, Տեառնընդառաջի Սուրբ Խորհուրդը եւ եկեղեցոյ օրհնութիւնը: Գիշերը, Տէր Միւռն, Երեցկին եւ Ծխական Խորհուրդի ներկայացուցիչներ ներկայ գտնուեցան Ս. Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին կազմակերպած Կալա Ընթրիքին:



Դշ., 14 Փետրուար – Հաւատացեալները միացան Տէր Միւռնին մասնակցելու համար Պահքի հսկումի արարողութեան, միշտ գիտակցելով որ Պահքը կը նուազեցնէ մեր բեռը եւ առիթ կը ստեղծէ կատարելու մեր սրտաբուխ աղօթքները:

Ուրբ., 16 Փետրուար – Ընկերակցութեամբ Բարեկեցութեան Կեդրոնի մեր պապիկներուն ու մամիկներուն, Տէր Միւռն կատարեց Արեւազալի ժամերգութիւն:

Կիր., 18 Փետրուար – Արտաքսման Կիրակիի առթիւ Տէր Միւռն մատուցեց Պատարագ: Տեղի ունեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն ՀՕՄ-ի Մայր Սօֆիա Յակոբեանի եւ ՀՕՄ-ի Արաքս Մասնաճիւղի բոլոր ննջեցեալներուն հոգիներուն ի հանգիստ: Ապա հաւատացեալները թափօրով դուրս եկան կատարելու համար եռագոյն դրօշակի արարողութիւն, որ պիտի ծածանի եկեղեցոյ մայր մուտքին: Երգուեցաւ Հայաստանի Օրհներգ «Մեր Հայրենիք»ը: Դրօշը նուիրուած է փոքրիկն Լիլիթ Պարուճեանի կողմէ:



Դշ., 21 Փետրուար – Հսկումի արարողութենէն ետք Տէր Միւռն նախաձեռնեց Սուրբ Գրոց Սերտողութեան Բայտի Արարատ Սկառուներու Սրահին մէջ: Այս սերտողութիւնները տեղի պիտի ունենան երկշաբաթեայ դրութեամբ Զորեքշաբթի երեկոները ժամը 8-9:

Եշ., 22 Փետրուար – Տէր Միւռն այցելեց երկու մեծահասակներու Էտէնտրի Հանգստեան Տան մէջ, աղօթք բարձրացուց եւ օրհնեց զանոնք տալով անոնց Սուրբ Հաղորդութիւն:



Կիր., 25 Փետրուար – Անառակի Կիրակիի պատարագէն ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն մեր բոլոր բարերարներուն հոգիներուն ի հանգիստ:

Մարի Բլէր Թորոսեան

ՄԵԼՊՈՒՐՆ Սուրբ Աստուածածին Եկեղեցի

Գշ., 13 Փետրուար – Երեկոյեան Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ կից սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում ՀՀ Սփիւռքի Գործերու Յանձնակատար Տիար Զարեհ Սինանեանին հետ: Հանդիպման հրաւիրուած էին Մելպուրնի մէջ գործող բոլոր հայկական կազմակերպութիւնները և անհատներ: Պարոն Սինանեան ներկայացուց սփիւռքահայութեան վերաբերող ՀՀ կառավարութեան յառաջիկայ և այժմու ծրագիրները և պատասխանեց ներկաներու հարցումներուն:



Նոյն օրը Պարոն Սինանեան հանդիպեցաւ Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ հոգևոր Հովիւ արժանապատիւ Տէր Խաչեր քահանայ Յարութիւնեանին հետ:

Կիր., 18 Փետրուար – Յաւարտ Սուրբ Պատարագի, Տեառնընդառաջի տօնին առիթով, Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ մէջ կատարուեցաւ Նորապսակներու օրհնութեան կարգ, որմէ ետք Եկեղեցոյ բակին մէջ կատարուեցաւ Անդաստան եւ վառեցաւ աւանդական տեառնընդառաջի խարոյկը:

Տէր Խաչեր Յարութիւնեան



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ



Փետրուար 3-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցոյ մէջ կատարուեցաւ քահանայական ձեռնադրութիւն: Յընթացս Սուրբ և Անմահ Պատարագին, ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական եպիսկոպոս Կիլկիլեանի, քահանայական ձեռնադրութեան և օծման արժանացան Մայր Աթոռի տարբեր կառոյցներու մէջ սպասատրող տասնմէկ սարկաւագներ:

Օշական Սրբազան քահանայութեան կոչեց նորընծաները, Սրբալոյս Միւռնով օծելով քահանաներու ճակատներն ու ձեռքերը և շնորհելով անոնց նոր հոգևոր անուններ:

Արտակ սարկաւագ Ղևոնդեանը վերակոչուեցաւ Տ. Կոմիտաս քահանայ, Դաւիթ սարկաւագ Հայրապետեանը՝ Տ. Վարդան քահանայ, Գեորգ սարկաւագ Միրզոյեանը՝ Տ. Արտակ քահանայ, Լորիս սարկաւագ Անդրէասեանը՝ Տ. Վազգէն քահանայ, Նարեկ սարկաւագ Թորգոմեանը՝ Տ. Յովհաննէս քահանայ, Անդրանիկ սարկաւագ Մինասեանը՝ Տ. Գրիգոր քահանայ, Սամուէլ սարկաւագ Բաղդասարեանը՝ Տ. Սեպուհ քահանայ, Սևակ սարկաւագ Գրիգորեանը՝ Տ. Եսայի քահանայ, Ռոբերտ սարկաւագ Ոսկանեանը՝ Տ. Ոսկան քահանայ և Գարիկ սարկաւագ Հոխանեանը՝ Տ. Ղուկաս քահանայ:



Ձեռնադրութեան ասարտին նորած քահանաները իրենց անդրանիկ օրհնութիւնը փոխանցեցին հաւատացեալներուն: Այնուհետև ձեռնադրող Սրբազան Հայրը, իր քարոզին մէջ, անդրադառնալով քահանայութեան կարևորութեան, մաղթեց որ նորընծաները իրենց կարգին մէջ ըլլան հաւատարիմ և ծառայասէր հոգևորականներ:



«Միրելի նորընծաներ, ձեր առաքելութիւնը շուտով պէտք է սկսուի. եղէք քաջ հովիւներ, մատուցէք ձեր ծառայութիւնը Հայ Եկեղեցուն և ժողովրդին, մանաւանդ այս օրերին, երբ տարբեր տեսակի փորձութիւններ ու դժուարութիւններ կան մեր շուրջըրըրը: Եղէք արթուն, և զօրաւոր, ծառայէք մեր ժողովրդին. մեր ժողովուրդը աւելի քան երբեք կարօտն ունի ձեր խօսքի, ձեր աղօթքի և ձեր մխիթարութեան: ...Քրիստոսի խօսքը ձեզ համար թող լինի ձեր վահանը, ձեր սուրըրը և ձեր խաչը, որպէսզի կարողանաք ամբողջանուէր ծառայել Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն», - ըսաւ Օշական Սրբազանը՝ յորդորելով հաւատացեալները աղօթք բարձրացնել առ Աստուած նաև նորընծայ քահանաներուն համար, որպէսզի անոնք իրենց կարգին մէջ մնան ամուր ու հաստատ:



Սրբազան Հայրը նաև իր երախտագիտությունը յայտնեց Նորին Սրբության քահանայական ձեռնադրություն կատարելու հնարաւորութեան ընձեռման համար:

Ապա Մայր Աթոռի միաբաններն ու ներկայ հոգևորականաց դասը, Ամենայն Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ, բարձրացան Սուրբ Խորան, շնորհաւորեցին քահանաները և համբուրեցին վերջիններուս միւռոնաբոյր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջոյն»-ը: Նոյն օրը՝ երեկոյան, Սուրբ Գայանէ վանքին մէջ կատարուեցաւ վեղարի տուչութեան արարողութիւն: Ս. Յովհաննէս, Ս.

Գրիգոր, Ս. Եսայի, Ս. Ոսկան և Ս. Ղուկաս քահանաները վեղար ստացան ու դարձան Ս. Էջմիածնի միաբանութեան անդամներ: Նորած քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կ'անցնեն քառասնօրեայ պատրաստութեան և աթօթքի շրջան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱՆՆԵՐ

Փետրուար 5-ին Վեհափառը ընդունեց նախորդ օրը քահանայական կոչման արժանացած տասնմէկ քահանանները առաջնորդութեամբ լուսարարապետ Գերաշնորհ Ս. Մուշեղ եպիսկոպոս Բարայեանի և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Օշական եպիսկոպոս Կիլկիլեանի:

Ձեռնադրող Օշական Սրբազան, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, իր երախտագիտությունը յայտնեց քահանայական ձեռնադրություն կատարելու պատուին արժանացնելուն համար:

Նորած եկեղեցականներուն անունով Հայոց Հայրապետին երախտագիտութեան խօսք ըսաւ Արժ. Ս. Կոմիտաս քահանայ Ղևոնդեան, հաւաստիացնելով, որ ամէն ջանք կը ներդնեն իրենց նուիրեալ ծառայութիւնը բերելու Հայ Եկեղեցոյ անդաստանին մէջ:

Վեհափառ Հայրապետը յորդորեց նորընծայ եկեղեցականները, պատգամելով արդիւնաւորել իրենց հոգևոր սպասաւորութիւնը հոգեխնամ ու կրթադաստիարակչական գործունէութեամբ, Աւետարանի և սուրբ հայրերու պատգամներուն համաձայն հայրորդիներու մէջ հաստատել ու զօրացնել սէրը Հայ Եկեղեցոյ և Հայրենիքի նկատմամբ:

Վեհափառը գնահատեց ձեռնադրող Սրբազան Հայրը, ինչպէս նաև Մայր Աթոռի հոգևոր կրթական հաստատութիւններն ու լուսարարապետութիւնը եկեղեցականներու պատրաստութեան և ձեռնադրութեան աշխատանքին մէջ ներդրուած ջանքերուն համար:



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՆՆԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փետրուար 6-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնախմբեց Սուրբ Ղևոնդեանց քահանաններու յիշատակը: Այս առիթով Արմաւիրի թեմի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ, ի ներկայութեան 243 եկեղեցականներու, թեմակալ առաջնորդներու, Մայր Աթոռի միաբանութեան և բազմաթիւ հաւատացեալ հայորդիներու:



Պատարագիչ՝ Արժ. Ս. Ահարոն քահանայ Գրիգորեան: Տէր Հայրը, իր քարոզին մէջ պատգամեց Սրբոց Ղևոնդեանց օրինակով թօթափել վախը, անտարբերութիւնը և քաջութեամբ պայքարիլ քրիստոնէական ու ազգային արժէքներու պահպանման սպառնացող վտանգներուն դէմ:

Սուրբ Պատարագի աւարտին քահանայից դասը հաւաքուեցաւ Գեորգեան հոգևոր ճեմարանի հանդիսութիւններու դահլիճ, ուր ողջոյնի խօսք ըսաւ Շիրակի թեմի առաջնորդ և քահանայից հաւաքներու կազմակերպիչ յանձնախումբի պատասխանատու Գերաշնորհ Ս. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեան:



Այնուհետև «Հանրակրթական ծրագրերու փոփոխութիւններու մասին (Հայոց Պատմութիւն նիւթ)» զեկուցեց Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի տնօրէն Հոգեշնորհ Ս. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան: Հայր Սուրբը ներկայացուց Մայր Աթոռի դիրքորոշումները հանրակրթական առարկայական չափորոշիչներու նախագծի, «Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն» նիւթի և 7-րդ դասարանի «Հայոց Պատմութիւն» դասագրքին մէջ տեղ գտած բացթողումներուն մասին: Կատարուեցան քննարկումներ:

Ապա տեղի ունեցաւ աւանդական շնորհաբաշխութիւնը: Ի գնահատութիւն Հայոց Եկեղեցւոյ երկարամեայ վաստակի, նուիրեալ և արդիւնատր հովուական ծառայութեան՝ շաբթ մը եկեղեցականներու շնորհուեցաւ աւագ քահանայութեան պատիւ, ծաղկեայ փիլոն և լանջախաչ կրելու իրաւունք:



Աւագ քահանայութեան պատուին արժանացան Ֆրանսայի թեմէն Արժ. Ս. Գառնիկ քահանայ Կարապետեան և Ս. Անդրանիկ քահանայ Մալճեան, Կրասնոդարի և Հիւսիսային Կովկասի Հայոց թեմէն Արժ. Ս. Կոմիտաս քահանայ Յարութիւնեան:

Ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետութեան մէջ սպասաւորող Արժ. Ս. Յովհաննէս քահանայ Քեսաբլեանին, Արարատեան Հայրապետական թեմէն Արժ. Ս. Յովհաննէս քահանայ Մարութեանին և Ս. Արսէն քահանայ Սարոյեանին, Մասեացոտնի թեմէն Արժ. Ս. Դերենիկ քահանայ Միքայէլեանին և Ս. Եփրեմ քահանայ Յարութիւնեանին, Գեղարքունեաց թեմէն Արժ. Ս. Ներսէս քահանայ Սահակեանին, Շիրակի թեմէն Արժ. Ս. Յուսիկ քահանայ Գրիգորեանին, Կոտայքի թեմէն Արժ. Ս. Արիստակէս քահանայ Բաղալեանին, Ուքրաինիոյ հայոց թեմէն Արժ. Ս. Աբգար քահանայ Գըլրճեանին, Ս. Վարագ քահանայ Եապարեանին և Ս. Վարդան քահանայ Ադամեանին, իսկ Կրասնոտարի և Հիւսիսային Կովկասի Հայոց թեմէն Ս. Գրիգորիս քահանայ Ողոնսեանին:



Քահանայական լանջախաչ կրելու իրաւունքի արժանացան Մայր Աթոռի կառոյցներուն մէջ պաշտօնաւարող Արժ. Ս. Վաչական քահանայ Կիրճեանը և Ս. Մովսէս քահանայ Սահակեանը, Մասեացոտնի թեմէն Արժ. Ս. Յարութիւն քահանայ Յակոբեանը, Գեղարքունեաց թեմէն Արժ. Ս. Նարեկ քահանայ Այվազեանը, Տաւուշի թեմէն Արժ. Ս. Աբգար քահանայ Կարապետեանը, Վիրահայոց թեմէն Արժ. Ս. Ղևոնդ քահանայ Թազայեանը և Ս. Յովսէփ քահանայ Յարութիւնեանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմէն Արժ. Ս. Հայկազուն քահանայ Սահակեանը:



«Ազգային մտապատկերում Սուրբ Ղևոնդեանք մարմնացումն են «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» հերոսական ոգու, որով մեր ժողովուրդը իր պատմութեան տարբեր հանգրուաններում Աւարայրի գոյամարտ է մղել աստուածապարզն իր անկախ ու ազատ կեանքի և իր ինքնութեան անխաթար պահպանութեան համար: Միրելի հոգևոր հայրեր, այս պայքարը թւում է, թէ շարունակական է մեր ազգի յինելիութեան, մեր արդար իրաւունքների ու համազգային շահերի պաշտպանութեան համար: Մեր Սուրբ Եկեղեցու և եկեղեցականաց տերունապատուէր ծառայութիւնն ու

պատասխանատուութիւնը մեր ժողովրդի և հայրենեաց նկատմամբ մշտական է և անընդմիջելի՝ աննկուն պահելու Ղևոնդեանց ու Վարդանանց ոգին հայոց մէջ, դիմակայելու ժամանակի փորձութիւններին, պահպանելու այն, ինչ ազգային կեանքում նուիրական է և սուրբ, արժէքաւոր ու հարազատ:

Այսօր պատմութեան դժուարին շրջափուլ է ապրում մեր ժողովուրդը, մեր սրբազան հայրենիքը: Բռնագավթուած է Արցախը, անվտանգային մարտահրաւերների առջև է մեր նահատակ զաւակների արեամբ, համայն ազգի գոհողութիւններով կերտուած հայոց անկախ պետականութիւնը, հարուածների ներքոյ են մեր ժողովրդի նուիրական ընկալումներն ու ազգային-հոգևոր արժեհամակարգը, թիրախաւորում է նաև Հայոց Եկեղեցին»,- նշեց Նորին Սրբութիւնը՝ ցաւ ի սիրտ արձանագրելով, որ «հայ հասարակութեան մէջ սերմանում ու արմատաւորում են ստեղծուած ծանր իրավիճակի հետ հաշտողական տրամադրութիւններ՝ տկարացնելով չարին ու չարիքին ընդդիմանալու ոգին»:

Վկայակոչելով Պօղոս առաքեալի պատգամը՝ «Որովհետև Աստուած մեզ երկչտութեան ոգի չտուեց, այլ՝ զօրութեան, սիրոյ և զգաստութեան» (Բ Տիմ. Ա 7), Ամենայն Հայոց Կաթողիկոսը յորդորեց. «Այդ զօրութեան, սիրոյ և զգաստութեան ոգով պէտք է շարունակենք հոգևոր մեր առաքելութիւնը՝ հայորդեաց սրտերում զօրացնելով հաւատն ու յոյսը վաղուայ օրուայ նկատմամբ, սերմանելու հունտերը մեր լուսաւոր գալիքի տեսլականի: Նոյնն է առաքելութիւնը, նոյնն են պատասխանատուութիւնն ու պարտականութիւնը մերօրեայ Ղևոնդեանց քահանաներիդ, որպէսզի ձեր անդուլ և հետևողական աշխատանքով յետպատերազմեան այս թմբիկից դուրս բերուի մեր ժողովուրդը և իր հայրենական ու ազգային կեանքը ամրորեն վերախարսխի դարերի փորձութիւնների բովով թրծուած հայրենանուիրումի ու ազգասիրութեան վրայ: Մեր ազգի արժանապատիւ կեանքի վերակերտման հիմքում վերստին պէտք է անկիւնաքար դառնայ մեր ազգային-հոգևոր արժեհամակարգը, որը շաղախեալ է մեր ժողովրդի բազմադարեայ տառապանքներով ու հոգևոր խիզախումներով և ճրջմարիտ բանալին է մեր հաւաքական կամքի և ոգու յաղթութեան»:



Նորին Սրբութիւնը կոչ ըրաւ եկեղեցականներուն ամենայն ջանք գործադրել, որպէսզի համընդհանուր մերժման ու դատապարտման արժանանան անարդարութիւններն ու անիրաւութիւնները, և կասեցուին մեր ժողովուրդի միասնութիւնը խաթարող և ուժերը ջլատող ընթացքներն ու խոցելի երևոյթները:

**ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՄԷԶ**

Փետրուար 8-ին Մայր Աթոռի միաբանութիւնը Սուրբ Գայանէ վանքին մէջ մասնակցեցաւ Պատարագի սրբազան արարողութեան: Պատարագիչն էր Գեորգեան հոգևոր ճեմարանի տեսուչ և Մայր Աթոռի Միջ-եկեղեցական յարաբերութիւններու բաժնի տնօրէն Հոգեշնորհ Տ. Շահէ ԾՎ Անանեանը:





Իր քարոզին մեջ Հայր Սուրբը ըսաւ. «Միրելիներ, Վարդանանց յիշատակումն այսօր առաւել քան արդիական է, որովհետև անցնող մի քանի տարիների ընթացքում հոգևոր, կրթական, մտաւոր և ռազմական յարատև պայքարի մեջ ենք: Եւ այդ պայքարը կարծես ոչ թէ տանում է մեզ դէպի յաղթանակի, այլ միայն կորուստների: Մակայն հենց այստեղ է, որ Վարդանանց խորհուրդը գալիս է մեզ պատգամելու, որ եթէ մեր զորազուխը Յիսուսն է, մեր բանակը խաւարի մեջ ամենալուսաւորն ու ամենաանմեղն է: Ամէն պայքար կարող ենք յաջողութեամբ պսակել, եթէ մեր հայեացքն ուղղուած է մեր հաւատքի զօրագլխին»:

Կատարուեցաւ Հայրապետական մաղթանք:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ

Հինգշաբթի, 8 Փետրուարին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան Մայր Աթոռ Ս. Էջմիածինի մէջ, հանդիպում մը ունեցաւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի ներկայ իրավիճակին, Արցախի հիմնահարցին, արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան եւ յատկապէս Արցախի հաւաքական վերադարձին վերաբերող հարցերը:

Տեղեկութիւններ փոխանակուեցան՝ հայրենիքի մէջ եւ համաշխարհային մակարդակի վրայ Արցախի հարցին արդարացի լուծում տալուն գծով կատարուած աշխատանքներուն եւ նախատեսուած համահաճախական նախաձեռնութիւններուն վերաբերելով:

Շեշտուեցաւ արցախահայերուն մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելու եւ Հայաստանի պետականութեան հիմերու ամրապնդման աշխատանքին շարունակութեան՝ ի խնդիր ազգային միասնականութեան զօրացման եւ ներկայ մարտահրաւերներու յաղթահարման՝ ազգային կառոյցներուն միջեւ համագործակցութեան ընդլայնման եւ հայ ժողովուրդի կեանքին մէջ եկեղեցւոյ դերակատարութեան խորացման կարեւորութիւնը:

ՏԵԱՌՆՆՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՈՆԱԿ ԵՒ ՏՕՆ

Փետրուար 13-ի երեկոյեան, Վեհափառի նախագահութեամբ, Սուրբ Գայանէ վանքին մէջ Մայր Աթոռի միաբանութիւնը մասնակցեցաւ Երեկոյեան Ժամերգութեան, որմէ ետք կատարուեցաւ տարուան առաջին Անդաստանը: Այնուհետև Խորանի կանթեղէն վառուած մոմով Քրիստոսի կենսատու լոյսին որպէս խորհրդանիշ՝ Նորին Սրբութեան կողմէ փոխանցուեցաւ ներկաներուն: Նախատօնակէն ետք, ներկայութեամբ բազում հաւատացեալներու, ձեռամբ Վեհափառին, վառուեցաւ Տեառնընդառաջի խարոյկը: Վեհափառին կողմէ Տեառնընդառաջի տօնը հռչակուած է նորապսակներու օրհնութեան օր:



Ուստի, Փետրուար 14-ին մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագիչ՝ Կրասնոտարէն Արժ. Տ. Գրիգորիս քահանայ Պօղոսեան: Ան յորդորեց հաւատացեալները անսասան պահել հաւատքի լոյսը իրենց կեանքին մէջ: Ապա, հանդիսապետութեամբ Պալթեան երկիրներու հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Վարդան եպս Նաւասարդեանի, կատարուեցաւ նորապսակներու օրհնութիւն: Նոյն օրը Վեհափառը ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառոյցներուն մէջ սպասաւորող նորապսակ սարկաւազները:

ՓԵՏՐՈՒԱՐ 14-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԼԱԹՎԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԷՏԻԹ ՄԵՏՆԷՆ



Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Լաթվիայի իշխանություններու հայ համայնքին հանդեպ դրսևորած հոգատար վերաբերմունքին: Ան նաեւ յոյս յայտնեց, որ միջազգային հանրութեան և բարեկամ երկիրներու գործուն աջակցութեամբ հայ ժողովուրդը կը կարողանայ պաշտպանել իր արդար իրաւունքները: Դեսպանը ևս անդրադարձաւ երկկողմ բարեկամական յարաբերութիւններուն և անոնց ընդլայնման ուղղութեամբ տարուող աշխատանքներուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 15-ին Վեհափառը ընդունեց Միացեալ Թագաւորութեան Խորհրդարանի Համայնքներու պալատի անդամ Սըր Ճոն Ուիթինգտէլի գլխաւորած պատուիրակութիւնը: Ներկայ էր նաև Մեծն Բրիտանիոյ Հայաստանի դեսպան Վարուժան Ներսէսեանը: Վեհափառը անդրադարձաւ Հայաստանի առջև ծառայած անվտանգային հիմնախնդիրներուն, Արցախէն բռնահանուած հայորդիներու իրաւունքներու պաշտպանութեան, գերիներու վերադարձման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան անխաթար պահպանման հարցերուն: Ան նաեւ կարևորեց միջազգային հանրութեան կողմէ առարկայական ջանքերու գործադրումը Ադրբեջանի ռազմատենչ և ծաւալապաշտական նկրտումներու կասեցման համար: Իր հերթին Սըր Ճոն Ուիթինգտէլ Նորին Սրբութեան տեղեկացուց Ջերմուկ քաղաք պատուիրակութեան այցին և Արցախէն բռնի տեղահանուածներու ընտանիքներուն հետ հանդիպման տպաւորութիւններուն մասին, անդրադառնալով ժողովուրդին առջև ծառայած մարտահրաւերներուն: Աւարտին՝ Վեհափառը պատասխանեց ներկաներու հարցերուն, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան, Հայաստանեայց Առաքելական և Քոյր Եկեղեցիներու յարաբերութեանց առնչուած:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ» (ՀԳԱ) ԱՆԴԱՄՆԵՐԸ

Փետրուար 16-ին Վեհափառը ընդունեց (ՀԳԱ) անդամները, ուղեկցութեամբ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի և «Վաչէ և Թամար Մանուկեան» Մատենադարանի տնօրէն Արժ. Տ. Արարատ քահանայ Պօղոսեանի:

Տէր Հայրը, Նորին Սրբութեան ներկայացուց հիւրերը, ընդգծելով, որ անոնք ժամանած էին Գիրք նուիրելու օրուան ընդառաջ ստանալու Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութիւնը: Տէր Հայրը նաև անդրադարձաւ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի և ՀԳԱ-ի միջև առկայ համագործակցութեան:

Հայոց Հովուապետը ՀԳԱ-ի անդամներուն մաղթեց արդիւնաւոր առաքելութիւն՝ հայորդիներու մէջ ընթերցասիրութիւնը զօրացնելու և գրական ժառանգութեան հաղորդ դարձնելու աշխատանքին մէջ եւ բարձրօրէն գնահատեց գրադարաններու գործունէութիւնը ի նպաստ հայորդիներու կրթութեան, հաստատելով նաև, որ գիրքը մարդու կեանքի լաւագոյն ուղեկիցն է:



Իր հերթին ՀԳԱ նախագահ և Խնկո Ապեր ազգային մանկական գրադարանի տնօրեն տիկին Ռուզան Տոնոյեան տեղեկություններ փոխանցեց ՀԳԱ-ի հիմնադրման, գործունեության և յառաջիկայ ծրագրերուն մասին:

**16 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀՀ-ԵԱՆ ՄԷՋ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆ ԽՐԻՍՏՈՍ ՍՈՖԻԱՆՈՓՈՒԼՈՍԸ**



Հայոց Հայրապետը ընդգծեց, որ հայ-յունական բարեկամությունը կու գայ դարերու խորքէն և խարսխուած է քրիստոնէական արժեհամակարգի ամուր հիմքերու վրայ: Ան գոհունակութեամբ անդրադարձաւ Սփիւռքի մէջ Հայ և Յոյն համայնքներու սերտ գործակցութեան, ինչպէս նաև Հայաստանեայց Առաքելական և Յոյն Ուղղափառ Եկեղեցիներու միջև առկայ ջերմ յարաբերութիւններուն: Իր հերթին դէսպանը Նորին Սրբութիւնը հաւաստիացուց, որ առաւելագոյն ջանքեր կը ներդնէ հայ-յունական գործակցութեան առաւել զօրացման, ինչպէս նաև Արցախի հոգևոր-

մշակութային ժառանգութեան պահպանման ուղղութեամբ:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԷՋ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ**

Փետրուար 19-ին, Վեհափառը հանդիպեցաւ հերթական երեք-շաբաթեայ վերապատրաստման դասընթացներուն մասնակից քահանաներուն, որոնք ժամանած էին Հայաստանի և Սփիւռքի տարբեր թեմերէն:

Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեան տեղեկութիւններ փոխանցեց վերապատրաստման դասընթացներու ընթացքին մասին, որոնց ընթացքին նաեւ կը քննարկուին Եկեղեցւոյ և հասարակութեան առջև ծառայած արդի մարտահրաւերները:

Վեհափառը յորդորեց ամէն ջանք ի գործ դնել ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ այս ծանր ու դժուարին օրերուն առաւել ջանասիրութեամբ ծառայել: Այս առնչութեամբ Նորին Սրբութիւնը պատգամեց քահանայ հայրերուն յաւուր պատշաճի արձագանգել ազգային կեանքին մէջ տեղ գտնող անցանկալի երևոյթներուն: Ի մասնաւորի սփիւռք ծառայողները յորդորեց իրենց համայնքներուն միջոցով տեղական իշխանութիւններուն առջև բարձրաձայնել Հայաստանի և տեղահանուած արցախահայութեան առջև ծառայած մարտահրաւերներուն մասին:

Մասնակից հոգևորականներուն անունով Վեհափառը ողջունեց Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժ. Տ. Նորայր արագ քին Պաղտասարեանը:



**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ (ԳՀԽ) ԺՈՂՈՎԸ**

Փետրուար 20-24, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, գումարուեցաւ Գերագոյն հոգևոր խորհուրդի ժողովը, ընդլայնուած կազմով:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մահակ արքեպիսկոպոս Մաշալեանի մասնակցութիւնը ժողովին:

Հայաստանի ու Արցախի շուրջ ընթացող զարգացումներու, երկրին առջև ծառայած մարտահրաւերներու, արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան, անոնց ուղղուած ընկերային աջակցութեան և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան ուղղութեամբ իրականացած նախաձեռնութիւններու վերաբերեալ զեկոյցներով հանդէս եկան Մայր Աթոռի Ընկերային Ծառայութեան վարչական խորհուրդի ատենապետ Ս. Գեորգեայիսկոպոս Սարոյեան, Մայր Աթոռի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի տնօրէն Ս. Գարեգին վարդապետ Համբարձումեան, Իրաւունքի և արդարութեան «Թաթոյեան» հիմնադրամի տնօրէն Տիար Արման Թաթոյեան:



Գերագոյն Հոգևոր Խորհուրդը դատապարտելի նկատեց հրադադարի պայմաններուն մէջ Ատրպէյճանի անթաքոյց ծաւալապաշտական նկրտումները, Հայաստանի ինքնիշխան տարածքներու նկատմամբ շարունակուող ատրպէյճանական զինուած ուժերու ոտնձգութիւնները և թշնամանքի ու հայատեացութեան քարոզչութիւնը: Հայրենիքին առջև ծառայած անվտանգային հիմնախնդիրներու յաղթահարման, Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան հարցի կապակցութեամբ ԳՀԽ-ը կենսական և կարևոր համարեց համազգային միաբանութիւնը, ազգային կառոյցներու ներուժի արդիւնաւէտ կեդրոնացումը, Հայաստան և սփիւռք յարաբերութիւններու առողջացումն ու գործակցութեան պատշաճ կազմակերպումը: Ժողովականները նաեւ աղօթք բարձրացուցին օրեր առաջ Սիւնիքի Ներքին Հանդ գիւղի հայկական դիրքերուն ուղղութեամբ ատրպէյճանական յարձակման պատճառով զոհուած զինծառայողներու հոգիներու խաղաղութեան և վիրաւորներու շուտափոյթ ապաքինման համար:

Անդրադառնալով Ատրպէյճանի կողմէ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան թիրախաւորման ու իւրացման քաղաքականութեան, պատմամշակութային արժէքներու, պատմական սրբատեղիներու ու շիրիմներու պղծման ու ոչնչացման դէպքերուն, ԳՀԽ-ը կարեւորեց Մայր Աթոռի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակի հետևողական ջանքերը միջազգային հանրութիւնը իրազեկելու Արցախի յուշարձաններուն սպառնացող վտանգներուն մասին:

Տեղեկացուեցաւ, որ իրականացուող ընկերային ծրագրերու ծիրէն ներս, անցնող ամիսներուն Եկեղեցին կեցութեան պայմաններ ապահոված է և նիւթական աջակցութիւն տրամադրած բռնի տեղահանուած բազում արցախահայերու, մասնաւորաբար զոհուածներու եւ չորս ու աւելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներու: Ծրագրերու շարունակականութեան ապահովման համար ժողովը որոշեց նոր միջոցներու դիմել:



Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններուն եւ հանրակրթութեան ծիրին մէջ իրականացուող փոփոխութիւններու մասին զեկոյցներ ներկայացուցին դիւանապետ Ս. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը և ՔԴԿ տնօրէն Ս. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեանը:

Եկեղեցի-պետութիւն ոչ բնականոն յարաբերութիւններու պատճառով կարգ մը առանցքային կարեւորութիւն ներկայացնող հիմնախնդիրներ ինչպէս օրէնսդրութիւն, կրթութիւն, մշակոյթ, սրբավայրերու պահպանութիւն լուծումի կը կարօտին:

Ժողովականները մտահոգութիւն արտայայտեցին, որ հանրակրթութեան ծիրին մէջ իշխանութիւններուն որդեգրած քաղաքականութեան պատճառով հարուածի տակ են հայագիտական նիւթերը, մասնաւորաբար կոպտագոյն սխալներով, բացթողումներով և կամայական մօտեցումներով աղճատուած և ձեւախեղուած է Հայոց պատմութեան բովանդակութիւնը: Վերահաստատելով իր դիրքորոշումը ԳՀԽ եզրահանգեց, որ օրինական բոլոր ճանապարհներով պէտք է հանրակրթութիւնը զերծ պահել ինչպէս հակազիտական, այնպէս ալ հակազգային հոսանքներու և գաղափարներու ազդեցութենէն:

Մասնաւոր կարեւորութիւն տրուեցաւ նոր Սահմանադրութիւն ընդունելու վերաբերեալ ՀՀ իշխանութիւններու մտադրութեան: Ընդգծելով, որ ՀՀ Սահմանադրութեան հիմք կը կազմեն ազգային-հոգևոր կեանքի խորհրդանիշները, մեր ժողովուրդի նուիրական անցեալի յիշատակներն ու իրադարձութիւնները և ազգային մեր իղձերն ու ձգտումները՝ ժողովականները անթոյլատրելի համարեցին այդ արժէքները որևէ ձեւով նսեմացնելը կամ անտեսելը հանրային քննարկումներուն մէջ, առաւել ևս նոր Սահմանադրութեան ընդունման գործընթացին ընթացքին:



ԳՀԽ-ը խիստ տարակուսելի համարեց նոր Սահմանադրութիւն ընդունելու նախաձեռնութիւնը յատկապէս, երբ հանրային ստուար շրջանակներու մէջ այն կ'ընկալուի հետևանք արտաքին ճնշումներու: Արձանագրուեցաւ, որ նոր Սահմանադրութեան ընդունման վերաբերեալ Հայաստանի բարձրաստիճան տարբեր պաշտօնեաներու, ինչպէս նաև Ատրպէյճանի նախագահին խոստյոթ միայն կը խորացնէ առկայ կասկածները:

Քննելով «Ընտանիքում բռնութեան կանխարգելման, ընտանիքում բռնութեան ենթարկուած անձանց պաշտպանութեան և ընտանիքում համերաշխութեան վերականգնման մասին» օրէնքին մէջ առաջարկուող փոփոխութիւնները, ԳՀԽ խիստ կարևորութեամբ ընդգծեց, որ օրէնքին մէջ առաջարկուող յաւելումները պէտք չէ որ հակասեն մեր ժողովուրդին ընտանիքին հանդէպ ունեցած նուիրական պատկերացումներուն ու քրիստոնէական ընկալումներուն և պէտք չէ տեղ տան մերժելի տարրնկալումներու:

Մայր Տաճարի հիմնանորոգութեան ընթացքին և վերածման, ինչպէս նաև Միւռնօրհնութեան արարողութիւններուն կազմակերպական աշխատանքներուն վերաբերեալ զեկոյցներով հանդէս եկան Մայր Աթոռի դիւանապետ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը և լուսարարապետ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը:

Ժողովականները նաև այցելեցին Մայր Տաճար և ծանօթացան հիմնանորոգութեան ընթացքին: Ողջունելով կատարուած աշխատանքները՝ ԳՀԽ անդամները հաստատեցին, որ Մայր Տաճարի հիմնանորոգութեան աշխատանքները աւարտական փուլի մէջ են: Որոշուեցաւ Մայր Տաճարի վերածման եւ Միւռնօրհնութեան արարողութիւնները կազմակերպել Սեպտեմբեր 28-29-ին՝ Ս. Գեորգ Զօրավարի եւ Վարազայ Ս. Խաչի տօներուն:



Ներկայացուեցան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2023 թուականի գործունէութեան տեղեկագիրը, ֆինանսական տարեկան հաշուետուութիւնը եւ Վերստուգիչ Յանձնախումբի զեկոյցը: Ներկայացուեցան նախորդ տարին Հայաստանի և սփիւռքի համայնքներուն մէջ իրականացած հոգևոր-քարոզչական, մշակութային, կրթական և ընկերային բնոյթի ծրագիրները:

Քննարկման առարկայ դարձան նաև Նուիրապետական Աթոռներու, թեմերու գործունէութեան, եկեղեցավարչական, կանոնական, իրաւական, կրթադաստիարակչական ոլորտներուն առնչուող տարաբնոյթ այլ հարցեր:

Ժողովը աւարտեցաւ Վեհափառի օրհնութեան խօսքով և «Պահպանիչ» աղօթքով:

**ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՊԱ ՕՇԱԿԱՆԻ ՄԷՋ՝
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

Փետրուար 23-ին, մասնաւոր վարդապետական աստիճան ստանալու համար թեզ պաշտպանեց Կ.Պոլսոյ հայոց պատրիարքութեան միաբան Հոգեշնորհ Տ. Յովակիմ արեղայ Սերոբեանը՝ «Թարգմանական կրօնական երկերը 18-րդ դարու պոլսահայ գրատպութեան մէջ» թեմայով:



Յանձնաժողովին կը նախագահէր Տաւուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանեանը: Յանձնաժողովի անդամներ՝ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեան, Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մկրտիչ եպիսկոպոս Պոռշեան, Մասեացոտն թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Գեորգ եպիսկոպոս Մարոյեան և ԵՊՀ Աստուածաբանութեան կաճառի դեկան ու Երևանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցոյ հոգևոր տեսուչ Գերաշնորհ Ս. Անուշաւան եպիսկոպոս Ժամկոչեան: Քննիչ

յանձնախումբին եզրակացութիւնը դրական էր, հետեւաբար արժանի համարեց Հոգեշնորհ Ս. Յովակիմ արքեպիսկոպոս Սերոբեանին շնորհելու մասնաւոր վարդապետութեան աստիճան: 26 Փետրուարին, ձեռամբ Միքայէլ Արք Աջապահեանին, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցոյ մէջ, կատարուեցաւ վարդապետական աստիճանի տուչութեան արարողութիւն:

Նոյն օրը, Վեհափառը ընդունեց նորընծայ Յովակիմ վարդապետը: Հանդիպման ներկայ էին նաև Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանը և լուսարարապետ Գերաշնորհ Ս. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը:

Նորին Սրբութիւնը վստահութիւն յայտնեց, որ նորընծայ վարդապետը առաւել ջերմեռանդութեամբ կը շարունակէ իր նուիրեալ ծառայութիւնը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութեան շրջանակին մէջ:

Աւարտին Վեհափառը վարդապետական ականակուռ լանջախաչով զարդարեց Յովակիմ վարդապետին կուրծքը, և «Պահպանիչ» աղօթքով օրհնեց զայն:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՈՐՂԻՆԵՐԻ ԿԱՆՉ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ



Փետրուար 28-ին Վեհափառը հիւրընկալեց զոհուած հայորդիներու ծնողներն ու հարազատները միաւորող «Որդիների կանչ» հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչները:

Հայոց Հայրապետը հաստատեց, որ զոհուած սիրելիներու ծանր կորուստի ցաւը կարելի է սփոփել կարեկից և օգնական ըլլալով իրարու, նաև կեանքի կոչելով անոնց նուիրական երազները: Նորին Սրբութիւնը հաւաստիացուց, որ Հայոց Եկեղեցոյ հոգևոր

սպասաւորները պիտի շարունակեն առանձնակի հովուական խնամք եւ զօրակցութիւն ցուցաբերել նման ընտանիքներուն: Ան իր գնահատանքը յայտնեց կազմակերպութեան անդամներուն ազգային արժէքներու ամրապնդման, հայրենասիրական ոգիով սերունդներու դաստիարակութեան համար:

Դատապարտութեամբ անդրադառնալով Մումգալիթի հայ ազգաբնակչութեան զանգուածային ջարդերուն Վեհափառը ընդգծեց, որ անպատժելի մնացած և համընդհանուր դատապարտման չարժանացած այս ողբերգութիւնը հետագային տեղի տուաւ Ատրպէյճանին հայատեաց քաղաքականութեան, որուն արդիւնք՝ նոր ոճիրներ, մինչեւ արցախահայութեան բռնի տեղահանում: Ան հրամայական նկատեց համազգային միաբանութիւնը, կասեցնելու համար նոր արհաւիրքները:

Կաթողիկոսը պատասխանեց հարցումներու, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան, Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններուն վերաբերեալ:

DIOCESAN NEWS



Saturday 3 February - Under the auspices of the Primate His Eminence Archbishop Haigazoun Najarian, Hamazkaine's "Noubar Khatchadourian" Theatre Group presented the play "What Do Armenians Say" with two consecutive performances at 4:30 in the afternoon and 7:30 in the evening. Author and director: Garo Khachikian.

With the support of 10 devoted persons acting behind the scenes, 17 young Armenian actors, men and women, performed in different roles and entertained the audience, filling the theatre with laughter and smiles.

For the audience, this theatrical piece was a moment of awakening and reflection. Undoubtedly, this was a moral lesson for each of them, which could relate to similar issues they faced in their own homes.

In her closing words Mrs. Azniv Ingilizian mentioned the suffering and pain of all Armenians around the world in the past year, which deprived us all of the opportunity to organise events such as this play.



Sunday 4 February - During the liturgy in the Holy Resurrection Church, for the first time, certificates of commendation were granted to three Sunday school graduates by Archbishop Najarian, namely Anna Cherkezian, Aren Kevork Grigor and Sirak Kassis. A bilingual New Testament in Western Armenian and English was given along with the certificate.

Very Reverend Father Avetis Hambarzumyan congratulated the Archbishop on the occasion of the 49th anniversary of his priestly ordination, wishing him healthy and bright days ahead. Then he introduced the three newly graduated students to receive his blessings.



His Eminence congratulated the students, the teaching staff of the Sunday School, led by the Principal Yeretsgin Hasmik Hambarzumyan, the Parish Council and especially the parents, who every Sunday bring the students to Sunday School to receive the wisdom of the Bible, thus becoming good examples to other parents. "A special effort is made to educate these children according to the traditions of our church. This is how the ranks of the church are filled. From these students will come the future acolytes and deacons, the future Parish and Diocesan Councillors," concluded His Eminence and blessed

all the Sunday School students gathered around him.

Tuesday 6 February - His Eminence presided over the meeting of the Properties Committee.

Thursday 8 February - In every Vartanank Liturgy celebrated by His Eminence in Holy Resurrection Mother Church over the last ten years, the students of the two Armenian day schools in Sydney, AGBU Alexander School and Hamazkaine Galstaun College, have participated in the liturgy and received holy communion, and following the liturgy enjoyed a luncheon as guests of the church's Ladies' Auxiliary. This year, the same was repeated and 250 students and teachers received communion from the hands of His Eminence and the Reverend Fathers.



The liturgy began at 10:30am. Reverend Father Avetis Hambarzumyan served the altar. Archpriests Norayr Patanian and Bartev Karakashian were also present. Deacon Vartan performed the part of the choir, and

Sub-deacon Vartan Svazlian was the censer bearer. As the day was Thursday, a weekday, it was not expected that all members of the church choir and the deacons be present.



It has become a custom for the two Principals to read the scripture passages. Mr. Manoug Demirjian, Principal of Alexander School, read in Armenian, and Mr. Eddie Demirdjian, Principal of Galstaun College, read in English. Mr. Manoug Demirjian also read the confession.

During the Liturgy, the Thanksgiving Prayer for the Republic of Armenia was also offered.

At the end of the liturgy, His Eminence blessed all those who bear the names Vartan and Ardag. He also informed that this day was accepted as name day for all who do not bear names of Saints, in



memory of those who died in the battle of Vartanants. A beautiful tradition preserved for centuries.

His Eminence had chosen the topic "Death not known is death, death known is immortality" for his inspiring sermon.

He first explained why two armies immediately rose against each other and declared war, especially when relations between Persia and Armenians were on good grounds. What had happened? It is a historical fact that if the Parthians ruled the Persian throne and the Arshakunis ruled the Armenian throne, relations were friendly. However, when the Sassanians overthrew the Parthians and took over the Persian state's administration, they did everything they could to remove the Arshakunis from the throne of Armenia. Finally, in 428, the Arshakunis abdicated the throne. The Persians demanded that Armenia become Zoroastrian, especially since they saw two neighbouring Christian states, Byzantium, and Armenia, as a threat to their country and an obstacle to national security. Contrary to this reality, Byzantium did not provide any help to Christian Armenia. Therefore, the situation dictated either conversion and ultimate assimilation, or struggle. The Armenian leadership chose to fight.



Another weapon to assist the Armenian fight, was created in 405-406 thanks to Mesrob Mashdots, Sahak Barteve and King Vramshabouh. The Armenian alphabet had been found, which gave an opportunity for Armenians to create in their own language. Those letters became "soldiers" and "protected" the Armenian nation and continue to do so until today.

"The Vartanank created the consciousness of dying for freedom. We see the same faith and consciousness in the participants to the battle of Sardarabad. Unity leads to victory.

When we are weak and don't have courage to fight, we cede land to save our lives; in that case we become our enemy. Our courageous ancestors embraced death not to give the land. They took the example of fighting from the Holy Book, the Bible," explained the Archbishop.



Vartanank, like our heroic martyrs of our recent years, took holy communion a day prior to the battles as knowingly they would go to death to preserve the land and their identity. "The Vartanants mystery is in this awareness; we celebrate it in the Diaspora, and we pass that spirit from generation to generation, because we believe that conscious death is the only thing that leads to immortality. For this, we need brave young people who will continue the struggle for our survival, keep the language strong. Today, our people must have the consciousness to rediscover themselves. Why do we run away from military service? The army is the place of self-sacrifice, the Armenians would not enjoy humiliation and weakness. We believe in immortality; we believe in victory over death. The Church educates generations with this faith. Mothers should raise their children with this faith," concluded His Eminence.

At the end of the liturgy, the students kissed the Gospel and went to the church hall, where they had their lunch and returned to the church to conduct a coordinated artistic program.



Lara Galstyan, head student at Alexander School, gave the opening speech, which is presented in full below.

"Today, it is a great honour for me, as the head student of Alexander School, on behalf of the Principal, the teaching staff and the students, to give my speech of gratitude under the roof of the Holy Resurrection Church. This great national and ecclesiastical celebration is celebration of our identity, faithfulness to Christ and the Armenian people marching towards eternity.

Every year, in the month of February, Vartanants is celebrated with great pomp in all Armenian schools and churches around the world. In 451, Vartan Mamikonian and his

soldiers, with courage and self-sacrifice, gave the greatest example of love and faith to the Motherland. Armenian history was written with the blood of our warriors and martyrs, but it is with their brave deeds that our nation survived, overcame various trials, and finally rebuilt our Motherland and Church. With this awareness, one of the beautiful customs of our school has been, every year at the return to school, as grandchildren of Vartan the Brave and proud Armenians, to visit the Holy Resurrection Church, to commemorate the heroic fight that took place in the Battle of Avarayr, to participate in the Holy Mass and to take Holy Communion and to receive your blessing, Your Eminence, so that we can start and continue our school year with success. On behalf of the administration, teaching staff and students at our school, I thank you, Your Eminence, for inviting us to participate in this special day".



Even though the return to school was a week away from this event, but thanks to the efforts of the Armenian teachers of the two schools, especially Mesdames Seta Keoshkerian and Arpi Tavitian, as well as the students, it was possible to implement the following program. We present them one by one.

GROUP RECITATIONS

«Kachn Vartan Mamigonian» Year 5 students (Y5) Alexander School (AS) – «Hayrn ou Vortin» Y3 AS, «Hayots Kach Panagin» Y4 AS, «Pokrig Zinvore» Y1 AS, «Kachen Vartan Mamigonian» Y2 AS, «Badkam Vartanants» Y5 & 6 AS, «Vartanants Baderzme» Y7 Galstaun College (GC).



RECITATIONS

«Vartanank» Alik Hovagimian Y8 GC, «Dikrann Avarayroum» Alicia Hovhannissian & Melanie Bedrossian, Y6 GC, «Hadvadz Kachn Vartani Jaren» Harout Kassis, Y5 AS, «Khosk im Vortoun», Haig Vartanian & Rosemary Yacoubian, Y7 GC.

SOLO SONGS

«Vartani Mahe» Sera Bertigian, Y10 GC, «Doun im Hayreni» Anita Soghomonian, Y12 GC.



CHOIR SONGS

«Mishd Kalenk Harach» KG & Y1 AS, «Himi El Lrenk?» and «Badkam Vortous», Students of AS

SONG BY THE STUDENTS OF BOTH SCHOOLS – «Menk Kach Dohmi Zavagner Enk»

The closing speech was delivered by Rosie Martirosian, Y12 student of Galstaun College. Full text below:

“As Armenian students and Armenian youth who decide the future of the Armenian people, we want to express our gratitude to the Parish Council of the Armenian Apostolic Church of Holy Resurrection for this special initiative of the annual Vartanants celebration. Today, again, by participating in the Holy Liturgy of Vartanants, we made a new vow to keep alive the immortal memory of the heroes of Avarayr, that is, the titans who spared nothing for the Motherland.



This means, not only to remember so as not to forget, but to remember to realise our obligations, to think about the steps to be taken to face the challenges the Armenian nation is facing today.

While the tragic events and losses of recent years in the life of Armenians depressed us, more than ever it is necessary not to lose our moral courage...not to weaken...not to be discouraged...not to give up. Armenians are not defined by their losses. No matter what the evil forces do, no matter how unfair our destiny is, nothing can change our essence, the



consciousness of our nation's value and national pride, Christian faith and hopeful visions.

The past of the Armenian nation was full of victories and defeats. However, we came out of every defeat with a moral victory. These are all the values that we have not abandoned but have preserved for hundreds and thousands of years.

Today, in our Diasporan communities, it is necessary to treat our daily life as the bank of Dghmoud River and the field of Avarayr, where the weapon of struggle is our will, and each of us is an ambassador of Vartan Mamikonian. In other words, to be alerted to continue our struggle for existence... determined to preserve our identity and strive to preserve our language, Christian faith, and cultural values”.



It is a tradition that during this event, the Parish Council of Holy Resurrection Church awards three students from the two schools, who during the year have been exemplary in their character, service, friendliness, compassion, and active community service. This year, Father Avetis Hambardzumyan awarded Palig Kouzikarayan, GC (Secondary) - Karine Zilifian, GC (Primary) - Serineh Mahmur – AS.



Paros editorial congratulates the three awardees.



In his closing address, His Eminence congratulated all the students of the two schools who "encouraged us and filled us with hope for our present and future with the program they presented." Reflecting and referring to the national collective memory, he said: "If a person's memory is interrupted for a moment, the person turns into grass. The nation is also the same, without national memory, nations in history would not know who they are. Therefore, it is imperative to remember our national feasts. I wish you return to your schools more strengthened and refreshed" the Archbishop concluded and closed the ceremony with the Prayer of Protection.



